

ՄԱՍ 3. ՀԱՅԱՍՏԱՆ

ՈՉ ԵՅՈՒԹԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ 7. Առողջապահությունը և աղքատությունը

Առողջ բնակչությունը ոչ միայն որոշիչ նախապայման է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար, այլև կարևոր նախադրյալ թե՛ տնային տնտեսությունների, թե՛ հենց անհատների բարգավաճման համար:

Հայաստանը կարողացել է ապահովել առողջապահության հետևյալ ցուցանիշները՝ չնայած Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) շատ երկրների համեմատ բավական ցածր պետական ֆինանսավորմանը:

2014թ.-ին կյանքի սպասվող տևողությունը՝ ծնվելու պահից, տղամարդկանց մոտ կազմել է 71.8 տարի, որն ավելի բարձր ցուցանիշ է, քան ԵԿԱ շատ այլ երկրներում, իսկ կանանց մոտ՝ 77.9 տարի: Այդ երկու ցուցանիշն էլ գերազանցել են 1990թ.-ին գրանցված համապատասխան մակարդակները:

Պաշտոնական վիճակագրությունը գրանցել է մինչև մեկ տարեկան մանկական մահացության ցուցանիշի անկում: 2014թ.-ի ընթացքում, կյանքի առաջին տարում, արձանագրվել է երեխաների մահացության 376 դեպք, իսկ մանկական մահացության գործակիցը 1000 կենդանածնի հաշվով կազմել է 8.8 պրոմիլ, 1994թ.-ի՝ 14.7 պրոմիլի և 2004թ.-ի՝ 11.6 պրոմիլի դիմաց: Մինչև 5 տարեկանների մահացության գործակիցը (1 000 կենդանի ծնվածի հաշվով) 2014թ.-ին կազմել է՝ 10.3 պրոմիլ, 1994թ.-ի՝ 21.4 և 2004թ.-ի՝ 13.0 պրոմիլի դիմաց: 2014թ.-ին մայրական մահացության գործակիցը կազմել է՝ 18.6 պրոմիլ (100 000 կենդանի ծնվածի հաշվով), 1994թ.-ին արձանագրված՝ 29.0 և 2004թ.-ին՝ 26.7 պրոմիլի դիմաց:

2014թ.-ին առողջապահության ոլորտի մասով համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժինը կազմել է 6.1%, 2008թ.-ի 6.0%-ի համեմատ (Աղյուսակ 2.4.):

Ներդիր 7.1

1. Առողջապահության ոլորտի վերաբերյալ 2014 թվականին մշակված և ընդունված օրենքներ և ՀՀ կառավարության որոշումներ

ՀՀ օրենքներ.

- 1) «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-106-Ն օրենք,
- 2) «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-136-Ն օրենք,
- 3) «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-181-Ն օրենք,
- 4) «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին ՀՀ օրենք,

5) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենք:

ՀՀ կառավարության որոշումները՝

- 1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» /09.01.2014 թ. N 8-Ն/ որոշում,
- 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N 809-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին /09.01.2014N 5-Ն/ որոշում,
- 3) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» /16.01.2014N 21-Ն/ որոշում,
- 4) «Մոցիլակյան փաթեթի շահառուների առողջապահական փաթեթի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման, ինչպես նաև առողջապահական փաթեթի հասանելիության նպատակով էլեկտրոնային շտեմարանի ձևավորման ու վարման կարգը հաստատելու մասին» /27.03.2014N 375-Ն/ որոշում,
- 5) «Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» արձանագրային որոշում N 15, 17.04.2014,
- 6) «Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդություններ փոխանցողների դեմ պայքարի ծրագրին և ծրագրի 2014-2018 թվականների միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» արձանագրային որոշում N 22, 29.05.2014 թ.,
- 7) «Առողջությանը պատճառված վնասի ծանրությունը պարզելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննության իրականացման կարգը և տարբեր վնասվածքների հետևանքով առաջացած ընդհանուր աշխատունակության կայուն կորստի տոկոսները հաստատելու մասին» /14.08.2014 թ. N 860-Ն/ որոշում,
- 8) «Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի բժշկական, ստոմատոլոգիական, դեղագիտական, հանրային առողջապահական մասնագիտությունների և նեղ մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին» /04.09.2014 թ. N 952-Ն/ որոշում,
- 9) «Երեխաների սնուցման բարելավման հայեցակարգին և հայեցակարգի իրականացման 2015-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային 25.09.2014 թ. N 40 որոշում,
- 10) «Առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագրին և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» արձանագրային 27.11.2014 N 50 որոշում,
- 11) «Պոլիկլինիկական հաստատությունների օրինակելի մոդելները և նեղ մասնագետների և դիսպանսերային ծառայություն մատուցող մասնագետների կողմից սպասարկվող բնակչության կողմնորոշիչ թվերը սահմանելու

մասին» /25.12.2014թ. N1529-Ն/ որոշում,

12) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» / 27.03.2014 N 321-Ն, 31.07.2014 N 789-Ն/ որոշումներ,

13) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1242-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» /11.09.2014 N 963-Ն/ որոշում,

14) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» /11.09.2014 N 971-Ն/ որոշում,

15) «2015 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի նիստի թիվ 40 արձանագրային որոշում,

16) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 29-ի N 1275-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /30.10.2014 N 1202-Ն/ որոշում,

17) «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում հեռաբժշկության ցանց ստեղծելու մասին» փոխըմբռնման հուշագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին»/ 09.01.2014 N 37-Ս/ որոշում,

18) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» /27.11.2014 N 1342-Ն/ որոշում,

Ընդհանուր առմամբ, 2014 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված 60-ից ավելի որոշումներ:

2. Առողջապահության ոլորտում պետական քաղաքականությունն իրականացնելու համար կատարված միջոցառումները՝

Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ոլորտ.

1. Նախաձեռնվել են առողջապահության համակարգի, դրանում ընդգրկված կազմակերպությունների կառուցվածքի, գործառնությունների ստանդարտացմանը և իրավասությունների տարանջատմանն ուղղված աշխատանքներ:

- Իրականացվել է Երևան քաղաքի և մարզերի առողջապահության համակարգի քարտեզագրում,

- ՀՀ կառավարության 25.12.2014թ. N1529-Ն որոշմամբ սահմանվել են «Պոլիկլինիկական հաստատությունների օրինակելի մոդելները և նեղ մասնագետների և դիսպանսերային ծառայություն մատուցող մասնագետների կողմից սպասարկվող բնակչության կողմնորոշիչ թվերը »:

- Մշակվել են գյուղական համայնքներում գործող բժշկական կազմակերպությունների սահմանումները, ստանդարտ կառուցվածքը, տեխնիկական և կադրային հագեցվածությունը, բուժակ-մանկաբարձական բուժքրոջ, ԱՍՊ համակարգի սխեմատիկ կառուցվածքը և բժշկի գործառնությունները:

- Մշակվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահական հաստատությունների գործունեության գնահատման (վարկանիշավորման), բժշկական ծառայությունների մատուցման որակի ռիսկայնության աստիճանի գնահատման մեթոդաբանությունը, չափանիշները և իրականացման կարգի նախագիծը:

2. Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացի կանոնակարգման և բարելավման նպատակով մշակվել են՝

- «Հայաստանի հանրապետության հիվանդանոցային բուժօժանոցայությունների որակի ապահովման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի փետրվարի 26-ին հաստատված թիվ 8 արձանագրային որոշումը:

- Բժշկական օգնության և սպասարկման 25 կլինիկական ուղեցույց:

3. 2014թ. օգոստոսի 1-ից ՀՀ ամբողջ տարածքում գործարկվել է շտապ օգնության տեղեկատվական վերլուծական համակարգը (ՇՕՏՎ), որի շնորհիվ ստեղծվել են էլեկտրոնային կանչի թերթիկներ և բոլոր կանչերն ավտոմատ գրանցվում են համակարգում: Գործարկվել է 1-03.am կայքը, որտեղ ներկայացված են ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներ: Գործող անձանց համակարգը քաղաքացուն հնարավորություն է տալիս առողջության հետ կապված իրեն անհանգստացնող հարցն ուղղել համապատասխան որակավորում ունեցող բժիշկ մասնագետին և առցանց ստանալ պատասխան:

4. Համալիր ուսումնասիրության է ենթարկվել անեսթեզիոլոգիական, ռեանիմատոլոգիական, ինտերվենցիոն սրտաբանական, հեմոդիալիզային ծառայությունների ներկա վիճակը: Այդ ծառայությունների որակի և մատչելիության բարելավման նպատակով նախապատրաստվում են միջոցառումներ:

5. Առողջապահական կազմակերպությունների խնդիրներին տեղում ծանոթանալու, առկա վիճակը գնահատելու և համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարն այցելել է մարզային շուրջ 30 և Երևան քաղաքի 20-ից ավելի բժշկական հաստատություններ:

Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտ.

1. ՀՀ կառավարություն է ներկայացվել՝

- «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (սոցիալապես անապահով խմբերի վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից անվճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու ընթացակարգերի սահմանում):

- «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը (Մեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելում): Նախագիծը վերանայման փուլում է:

- «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի. N 1717-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին » ՀՀ կառավարության որոշման նախագիծը (անհասությամբ պայմանավորված շնչառության խանգարման համախտանիշով տառապող երեխաների համար Բերակտանտ ակտիվ նյութ պարունակող դեղերի պետության կողմից ձեռքբերում, որն ընդունվել է ՀՀ կառավարության որոշմամբ 2014 թվականի սեպտեմբերի 11-ին.):

2. ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվել են՝

- «Հղիների նախաձեռնողան հսկողության և գործիքային սկրինինգի, պտղի ներարգանդային վիճակի գնահատման, զարգացման արատների վաղ հայտնաբերման ծրագիրը», ինչպես նաև համապատասխան մասնագիտական գործելակարգեր ու ուղեցույցեր,

- «Ֆենիլկետոնուրիայի նորաձնային սկրինինգների գործընթացի բարելավման մասին» հրաման, համաձայն որի ֆենիլկետոնուրիայի նորաձնային սկրինինգի իրականացումն ընդգրկել է Հայաստանի ողջ տարածքը:

3. Կազմվել է «ՀՀ-ում անպտղության տարածվածության, պատճառագիտության և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման պահանջարկի գնահատման» հետազոտության նպատակային ծրագիր, որը կիրականացվի մինչև տարեվերջ:

Հանրային առողջության պահպանման ոլորտ

1. Անառողջ ապրելակերպով պայմանավորված ծանր քրոնիկ հիվանդությունների կանխարգելման, վաղաժամ մահացության կրճատման և բնակչության առողջության էական բարելավման նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունը մշակել և ընդունել է՝

ա) «Առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագիրը և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը:

բ) «Տրավմատիզմի կանխարգելմանն ուղղված ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը:

գ) Մշակվել և ներկայումս շրջանառության մեջ է «Առողջապահական համակարգի 2015-2020 թվականների զարգացման հայեցակարգը և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2. Ընթացքի մեջ է «Հանրային առողջության պահպանման մասին » ՀՀ օրենքի մշակումը:

3. Շարունակվում են էլեկտրոնային առողջապահական տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները: Մինչև ընթացիկ տարվա ավարտը համակարգը փորձարարական կարգով կգործարկվի առանձին բուժհաստատություններում:

Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ

1. Սեպտեմբերից պատվաստումների ազգային օրացույցում ներդրվել են պնևմակոկային պատվաստումները:

2. Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել գորակոչիկների և նախագորակոչիկների շրջանում կանխարգելիչ պատվաստումները զինկոմիսարիատներին կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում կազմակերպելու ուղղությամբ:

3. Աշխատանքներ են տարվել առանձին օջախներում բռնկումների տարածման (բրուցելիոզ, մենինգիտ, աղիքային վարակներ), ինչպես նաև էբոլա վիրուսի ՀՀ ներթափանցման կանխարգելման ուղղությամբ:

4. Համընդհանուր լաբորատոր ցանցի ստեղծման ռազմավարական ծրագրի շրջանակում հանրապետությունում լաբորատոր համակարգի գործունեությունը համապատասխանեցվում է միջազգային մոտեցումներին, ներդրվում են լաբորատոր որակի կառավարման և կենսաանվտանգության համակարգեր:

5. Մշակվել և ընդունվել են անհրաժեշտ հրամաններ համընդհանուր լաբորատոր ցանցի ներդրման համար (այդ թվում՝ այլ գերատեսչությունների հետ համատեղ):

Դեղորայքային քաղաքականության ոլորտ

1. Ամբողջովին վերանայվել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և հարակից մի շարք այլ օրենքների նախագծերի փաթեթը և լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարություն:
2. 2014 թվականի օգոստոսին տեղական ևս մեկ դեղարտադրողի շնորհիվ է ՊԱԳ հավաստագիր: Շարունակվում է տեղական արտադրողների ՊԱԳ համապատասխանության գնահատման աշխատանքները: Մյուս դեղարտադրողներին տրամադրվում է համապատասխան խորհրդատվություն՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ: ՊԱԳ դիտարկման աշխատանքներն էլ ավելի արդյունավետ դարձնելու նպատակով շարունակվում են «Դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմա (PIC/S)» միջազգային կազմակերպությանն անդամակցելու գործընթացները:
3. Տարվում են բանակցություններ պետության կողմից կենտրոնացված կարգով գնվող դեղերը անմիջապես դեղարտադրողներից հնարավոր առավել ցածր գներով ձեռք բերելու ուղղությամբ:
4. Իրականացվել են դիտարկումներ պետության կողմից գնվող այն դեղերի անվտանգությունը պարզելու մասով, որոնց վերաբերյալ հիվանդների կողմից դժգոհություններ են արձանագրվել: Աշխատանքներ են տարվել դեղերի կողմնակի ազդեցությունների դիտարկման համակարգի գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:
5. Դեղերի ռացիոնալ կիրառումը խթանելու, վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է «Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման միջոցառումների ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ, որի վերաբերյալ ԱՀԿ Եվրոպական գրասենյակի փորձագետների հավանությունից հետո նախագիծը դրվել է միջգերատեսչական շրջանառության:

Առողջապահության ֆինանսավորում և պետական պատվեր

1. Իրականացվել են պետական առողջապահության կարիքների գնահատման աշխատանքներ և մշակվել համապատասխան առաջարկություններ, որոնց արդյունքում 2015 թվականի առողջապահության ոլորտի բյուջետային ծրագրերի նախագծի միջոցները նախորդ տարվա հաստատված բյուջեի նկատմամբ նախատեսվում է ավելացնել 7.2 մլրդ դրամով:

2. 2015 թվականին պետական բյուջեով կատարվելու են 5 նոր ծրագրերի ներդրման աշխատանքներ, որոնք ուղղված են՝

1) սրտի անհետաձգելի վիրահատությունների իրականացմանը՝ 500.0 մլն դրամ,

2) արտասահմանյան առաջավոր կլինիկաների փորձի ուսումնասիրման նպատակով բժիշկների գործուղումներին՝ 36.0 մլն դրամ,

3) անցանկալի հիվանդությունների կանխարգելման նպատակով ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների մատչելիության ապահովմանը՝ 45.8 մլն դրամ,

4) անպտուղ գույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայությունների տրամադրմանը՝ 78.0 մլն. դրամ,

5) երեխաների առողջ սնուցում հանրային իրազեկման ծառայությունների իրականացմանը՝ 10.1 մլն դրամ:

3. 2014 թվականի հուլիսի 1-ից իրականացվել են աշխատանքներ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների բուժաշխատողների աշխատավարձերի նախատեսված բարձրացումն ապահովելու ուղղությամբ: Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների բժիշկների միջին աշխատավարձը բարձրացել է 60-70 տոկոսով, սպասարկվող բնակչության օպտիմալ թվաքանակի դեպքում կազմելով միջինը շուրջ 166,500 դրամ, իսկ աշխատանքի նորմալ պայմաններից շեղումների դեպքում (լեռնային և բարձր լեռնային, վնասակար պայմաններ) սահմանված հավելավճարների հետ միասին՝ 174,500-ից մինչև 216,450 դրամ: Ներկայումս ընթացքի մեջ են աշխատավարձերի բարձրացման արդյունքում ստացված փաստացի տվյալների հավաքագրման և ամփոփման աշխատանքները:

Կադրային քաղաքականության ոլորտ

1. Վերլուծվել և քարտեզագրվել է մարզերում առկա կադրային ներուժը, վերամասնագիտացումների և նոր մասնագիտություններ յուրացնելու միջոցով առկա կադրային բացը լրացնելու հնարավորությունը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

2. Մշակվել և ՀՀ կառավարության որոշմամբ 2014 թվականի սեպտեմբերի 4-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի բժշկական, ստոմատոլոգիական, դեղագիտական, հանրային առողջապահության մասնագիտությունների և նեղ մասնագիտությունների ցանկը, ինչը հնարավորություն կտա հստակեցնել ՀՀ-ում թույլատրվող բժշկական մասնագիտությունների շրջանակը, ինչպես նաև կսահմանվեն բժիշկ-մասնագետների որակավորման մասնագիտական բնութագրերը, ինչը կհստակեցնի նրանց մասնագիտական իրավասությունների շրջանակը:

3. Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով հատկացվել են համապատասխան միջոցներ արտասահմանյան առաջատար կլինիկաներում հայ մասնագետների վերապատրաստումը կազմակերպելու ուղղությամբ (տարեկան 12-13 մասնագետ), շեշտը դնելով առավել պահանջված և ռազմավարական տեսանկյունից կարևոր մասնագիտությունների վրա (ուռուցքաբանություն, արյունաբանություն, ճառագայթային բժշկություն և այլն):

4. Իրականացվել է ակտիվ աշխատանք մարզերի ներկայացրած հրատապ կադրային պահանջները գործուղումների միջոցով լրացնելու ուղղությամբ: Գործուղվել է 9 մասնագետ:

Տեսչական հսկողության ոլորտ

1. Մշակվել է «Մաքսային միության մաքսային սահմանը հատող անձանց և փոխադրամիջոցների, Մաքսային միության մաքսային սահմանով և Մաքսային միության մաքսային տարածքով տեղափոխվող հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2. Մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ Նախագահի 2014 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում կիրառվող ընթացակարգերում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրման հայեցակարգը հաստատելու մասին» թիվ ՆԿ-50-Ն կարգադրությունից բխող ՀՀ առողջապահության նախարարության 2015-2017 թվականների միջոցառումների ծրագրի նախագիծը:

Ներդիր 7.2

Առողջապահական համակարգի նկարագիր և հիմնական ցուցանիշներ:

2014թ. հանրապետությունում բնակչության ստացիոնար բուժումն իրականացվել է 130 հիվանդանոցներում, որոնց 67.7%-ը ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության են: Վերջինիս ենթակայությանն են նաև հանրապետությունում գործող 509 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներից 364-ը կամ 71.5%-ը: Առողջապահական հիմնարկները և ներուժը հիմնականում կենտրոնացված են հանրապետության առավելապես խոշոր քաղաքներում (հիմնականում ք.Երևանում՝ բժիշկների 69.1%-ը, ստացիոնար բուժօգնությունների՝ 42.3%-ը, հիվանդանոցային մահճակալների՝ 62.6%-ը, ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների՝ 29.5%-ը):

Առողջապահության հիմնական ցուցանիշները, 2009-2014թթ.

		2009	2010	2011	2012	2013	2014
Բոլոր մասնագիտությունների բժիշկների թվաքանակը, մարդ	Ընդամենը	13 177	13 591	13 490	12 938	12 664	12 896
	10 000 բնակչի հաշվով	40.6	41.7	41.2	42.7	42.0	42.8
Բնակչության թվաքանակը մեկ բժշկի հաշվով, մարդ		246.6	239.6	242.3	233.9	238.6	233.7
Միջին բժշկական անձնակազմի թվաքանակը, մարդ	Ընդամենը	18 516	18 649	18 820	18 784	18 426	18 053
	10 000 բնակչի հաշվով	57.0	57.2	57.5	62.1	61.1	60.0
Հիվանդանոցային հիմնարկների քանակը, միավոր		127	130	130	127	129	130
Հիվանդանոցային մահճակալների քանակը, միավոր	Ընդամենը	12 068	12 160	12 236	12 241	12 268	12 514
	10 000 բնակչի հաշվով	37.1	37.3	37.4	40.4	40.7	41.6
Հիվանդանոցներ ընդունված հիվանդների թվաքանակը, մարդ	Ընդամենը	317 726	323 962	346 999	375 316	373 069	406 552
	100 բնակչի հաշվով	9.8	9.9	10.6	12.4	12.3	13.5
Մեկ մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը		227	223	225	236	236	246
Մեկ հիվանդի ստացիոնար բուժման միջին տևողությունը (մեկ հիվանդի կողմից հիվանդանոցային մահճակալի զբաղեցրած օրերի միջին քանակը), օր		8.6	8.3	7.9	7.7	7.8	7.5
Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը, միավոր	Ընդամենը	487	504	506	513	514	509
	10 000 բնակչի հաշվով	1.5	1.5	1.5	1.7	1.7	1.7
Բժիշկների թվաքանակը ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, մարդ	Ընդամենը	4 889	4 968	4 984	5 022	4 928	4 746
	10 000 բնակչի հաշվով	15.0	15.2	15.2	16.6	16.3	15.8
Միջին բժշկական անձնակազմի թվաքանակը ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, մարդ	ընդամենը	7 865	7 893	7 833	7 784	7 596	7 410
	10 000 բնակչի հաշվով	24.2	24.2	23.9	25.7	25.2	24.6
Կրտսեր բժշկական անձնակազմի թվաքանակը ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, մարդ	Ընդամենը	1 115	1 094	1 098	1 083	1 058	1 021
	10 000 բնակչի հաշվով	3.4	3.3	3.3	3.6	3.5	3.4
Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների հզորությունը (հաճախումների քանակը մեկ հերթափոխում)	Ընդամենը	38 783	39 259	38 734	39 444	39 089	39 861
	10 000 բնակչի հաշվով	119.6	120.6	118.5	130.3	129.3	132.3
Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում	ընդամենը, հազ.	11 212.6	11 318.0	11 502.8	11 531.9	11 656.1	11 676.5
	մեկ բնակչի հաշվով	3.5	3.5	3.5	3.8	3.9	3.9
Կանանց կոնսուլտացիաների, մանկական պոլիկլինիկաների, ինքնուրույն բուժարանների, կանանց կոնսուլտացիաների և մանկական բաժանմունքներ ունեցող հիմնարկների քանակը, միավոր		353	363	365	375	380	378

Հղի կանանց և ծնողականների համար նախատեսված մահճակալների քանակը, միավոր	Ընդամենը	1 165	1 185	1 216	1 295	1 269	1 293
	Ֆերտիլային տարիքի կնոջ հաշվով 10 000	12.7	13.1	13.6	15.9	15.9	16.4
Հիվանդ երեխաների համար նախատեսված մահճակալների քանակը, միավոր	Ընդամենը	1 237	1 197	1 194	1 189	1 184	1 523
	10 000 երեխայի հաշվով	20.8	20.2	20.3	20.8	20.6	26.1
Շտապ բժշկական օգնության	կայանների քանակը, միավոր	100	104	106	108	108	104
	կանչերի քանակը, միավոր	384 767	380 636	402 974	423 109	469 833	480 136
	բժիշկների թվաքանակը 10 000 բնակչի հաշվով, մարդ	6.7	6.5	6.7	7.4	7.5	7.0

**Առողջապահական համակարգի տեսակարար ցուցանիշներն
ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ.**

	Հիվանդանոցներ ընդունված հիվանդների թվաքանակը 100 բնակչի հաշվով, մարդ	Հիվանդանոցային մահճակալների քանակը 10 000 բնակչի հաշվով, միավոր	Մեկ հիվանդի ստացիոնար բուժման միջին տևողությունը, օր	Մեկ մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը, օր	Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը 10 000 բնակչի հաշվով, միավոր	Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ մեկ բնակչի հաշվով
ք.Երևան	26.1	73.2	7.3	261	1.4	4.7
Արագածոտն	4.6	16.0	5.4	156	1.8	2.5
Արարատ	5.8	20.7	8.3	233	2.3	3.4
Արմավիր	5.2	14.1	5.6	206	2.3	3.3
Գեղարքունիք	5.4	32.2	17.2	288	1.7	3.2
Լոռի	8.3	21.3	6.5	256	2.0	3.8
Կոտայք	6.5	25.8	8.1	203	1.8	3.3
Շիրակ	9.3	35.6	7.4	193	1.3	3.4
Սյունիք	8.1	30.6	8.5	223	1.3	4.5
Վայոց ձոր	3.9	15.6	5.4	132	1.6	3.5
Տավուշ	5.9	21.5	5.3	147	2.0	2.9
Ընդամենը ՀՀ	13.5	41.6	7.5	246	1.7	3.9

**Բժիշկների և միջին բուժանձնակազմի թվաքանակն
ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ.**

մարդ

	Բժիշկների թվաքանակը		Միջին բուժանձնակազմի թվաքանակը	
	ընդամենը	10 000 բնակչի հաշվով	ընդամենը	10 000 բնակչի հաշվով
Ընդամենը ՀՀ	12 896	42.8	18 053	60.0
որից՝ ՀՀ առողջապահության նախարարության համակարգում				
ք.Երևան	8 917	83.2	8 778	81.9
Արագածոտն	221	16.8	652	49.7
Արարատ	468	18.0	1 032	39.7
Արմավիր	387	14.5	1 044	39.1
Գեղարքունիք	326	14.0	957	41.1
Լոռի	498	21.8	1 178	51.7
Կոտայք	500	19.6	1 083	42.5
Շիրակ	545	22.1	1 429	58.0
Սյունիք	281	20.0	787	56.1
Վայոց ձոր	110	21.4	258	50.2
Տավուշ	226	17.8	574	45.3

Հանրապետությունում 2014թ. գործող 509 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների 71.5%-ը բաժին է ընկել ՀՀ առողջապահության նախարարությանը:

**Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներն ըստ տեսակի,
ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ.**

միավոր

	Ինքնուրույն				Դիսպան-սերներ	Ստոմատոլոգիական		Բաժան-մունք հիվանդանոցի կազմում	Այլ	Ընդամենը
	մեծահասակների	մանկական	առողջության կենտրոններ	գյուղական ամբուլատորիաներ		մեծահասակների	մանկական			
ք.Երևան	23	2	45	-	5	24	5	36	10	150
Արագածոտն	-	-	-	16	-	2	-	6	-	24
Արարատ	-	-	1	49	-	3	-	6	-	59
Արմավիր	2	-	1	52	-	4	-	2	-	61
Գեղարքունիք	3	-	-	30	-	2	-	5	-	40
Լոռի	5	-	4	21	1	7	1	6	-	45
Կոտայք	2	-	3	30	1	3	-	6	-	45
Շիրակ	7	-	-	11	3	1	1	10	-	33
Սյունիք	-	-	-	10	1	2	-	5	-	18
Վայոց ձոր	-	-	-	5	-	-	-	3	-	8
Տավուշ	1	-	-	18	-	-	-	7	-	26
Ընդամենը ՀՀ	43	2	54	242	11	48	7	92	10	509

Հիվանդանոցների գործունեություն: 2014թ. ստացիոնար բուժման նպատակով հիվանդանոց են ընդունվել 406 552 մարդ, 1 000 բնակչի հաշվով նրանք կազմել են 134.9: Հիվանդանոց ընդունվածների 18.3%-ը 0-14 տարեկան երեխաներն են: Հիվանդանոցային մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը կազմել է 246 մահճակալ/օր, իսկ մեկ հիվանդի բուժման միջին տևողությունը՝ 7.5 մահճակալ/օր:

Կատարվել է 130 303 վիրահատություն, որի 11.2%-ը բաժին է ընկել 0-17 տարեկան երեխաներին, որի 82.5%-ը՝ 0-14 տարեկան երեխաներին: Վիրահատությունների 7.1%-ը կատարվել է էնդոսկոպիկ մեթոդով: Վիրահատվել են 124 643 հիվանդներ, նրանցից 11 895-ը (9.5%) 0-14 տարեկան երեխաներն են, 2 419-ը (1.9%)՝ 15-17 տարեկան դեռահասները: Վիրահատություններից մահացել է 484 մարդ, նրանց 9.5%-ը կազմել են 0-14 տարեկան երեխաները: 2014թ. ընթացքում հիվանդանոցից դուրս է գրվել 401 400 մարդ (98.7%), մահացել՝ 5 078 մարդ (1.2%):

Հիվանդանոցներն ըստ տեսակի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ.

	Ինքնուրույն հիվանդանոցներ	Միավորված հիվանդանոցներ	Առողջության կենտրոններ	Ծննդատներ՝ առանց կոնսուլտացիաների	Ծննդատներ՝ կանանց կոնսուլտացիաների հետ	Ստացիոնար ունեցող դիսպանսերներ	Ընդամենը
ք.Երևան	19	28	-	2	2	4	55
Արագածոտն	-	4	2	-	-	-	6
Արարատ	1	4	1	1	-	-	7
Արմավիր	1	2	-	1	-	-	4
Գեղարքունիք	2	3	1	1	-	-	7
Լոռի	1	5	1	-	-	1	8
Կոտայք	2	4	1	-	1	1	9
Շիրակ	5	4	5	1	-	2	17
Սյունիք	1	5	-	-	-	1	7
Վայոց ձոր	-	2	1	-	-	-	3
Տավուշ	-	4	3	-	-	-	7
Ընդամենը ՀՀ	32	65	15	6	3	9	130

Հիվանդանոցներում կատարված վիրահատություններն ըստ տեսակի, 2014թ.

	Վիրահատությունների քանակը, միավոր	դրանցից՝ 0-17 տարեկանների		Էնդոսկոպիկ մեթոդով վիրահատությունների քանակը, միավոր	Վիրահատություններից մահացածների թվաքանակը, մարդ	նրանցից՝ 0-17 տարեկաններ	
		ընդամենը	դրանցից՝ 0-14 տարեկանների			ընդամենը	նրանցից՝ 0-14 տարեկաններ
Նյարդային համակարգի	1 288	189	170	-	55	11	11
Ներզատական համակարգի	1 145	3	1	1	1	-	-
Տեսողական օրգանի	9 052	661	497	-	-	-	-
Ականջի, կոկորդի և քթի օրգանների	8 349	1 090	558	34	1	-	-
Շնչառական օրգանների	8 675	5 506	5 213	163	36	2	2
Սրտի	4 278	168	157	2 786	39	13	13
Անոթների	5 663	32	15	113	31	-	-
Որովայնի խոռոչի օրգանների	21 253	2 982	2 155	2 665	209	6	6
Երիկամների և միզաձորանների	3 141	254	226	632	13	-	-
Շագանակագեղձի	1 616	8	-	694	4	-	-
Կանանց սեռական օրգանների	10 144	45	16	1 494	2	-	-
Մանկաբարձական	31 529	53	1	148	1	-	-
Ոսկրամկանային համակարգի	10 000	2 181	1 905	389	52	-	-
Կրծքագեղձի	1 747	4	4	-	4	-	-
Մաշկի և ենթամաշկային բջջանքի	4 561	978	800	-	1	-	-
Այլ	7 862	415	309	143	35	14	14
Ընդամենը	130 303	14 569	12 027	9 262	484	46	46

Շտապ բուժօգնության գործունեության հիմնական ցուցանիշները, 2009-2014թթ.

	2009	2010	2011	2012	2013	2014	
Շտապ բժշկական օգնության կայանների քանակը, միավոր	100	104	106	108	108	104	
Շտապ բժշկական օգնության կանչերի քանակը, միավոր	384 767	380 636	402 974	423 109	469 833	480 136	
Բժիշկների թվաքանակը 100 000 բնակչի հաշվով, մարդ	6.7	6.5	6.7	7.4	7.5	7.0	
Բրիգադների քանակը, միավոր	ընդհանուր պրոֆիլային	332	347	393	399	403	221
	Մասնագիտացված	28	22	25	25	28	19
	Բուժակային	112	115	87	81	69	39
Կանչերով սպասարկված անձանց թվաքանակը, մարդ	Ընդամենը	390 983	386 598	409 214	428 831	476 585	486 110
	1 000 բնակչի հաշվով	120.5	118.7	125.0	141.8	157.7	161.3
Անհետաձգելի և պլանային խորհրդատվական բաժանմունքներ	քանակը, միավոր	1	1	1	1	1	1
	սպասարկված անձանց թվաքանակը, մարդ	3	22	30	68	878	51

7.1. Առողջապահության ծառայությունների մատչելիություն

Համաձայն 2014թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքների, առողջական վիճակի՝ սուբյեկտիվ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ՝ նորմալ, լավ և շատ լավ գնահատականը ստացվել է 88.6% բնակչության կողմից, իսկ վատ և շատ վատ գնահատականը՝ 11.4%-ի կողմից: Երբ առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականները դիտարկվում են ըստ աղքատության մակարդակի, ապա վատառողջ են ոչ աղքատների 11.5%-ը, աղքատների՝ 10.9% և ծայրահեղ աղքատների՝ 12.4%-ը: Համաձայն 2014թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքների, հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում հիվանդացել են հարցվածների 15%-ը:

Հիվանդության ժամանակ դիմել է առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին բժշկական խորհրդատվության կամ բուժման համար հիվանդների 37.6%-ը, ընդ որում՝ այլ քաղաքներում բնակվողները ավելի հաճախ՝ (42.7%), քան երևանաբնակները՝ (36.3%), և գյուղաբնակները (34.4%): Նախորդ տարվա համեմատ հիվանդներն ավելի հաճախ են դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման ինչպես երկրի մակարդակով, այնպես էլ ըստ տարածաշրջանների (2013թ.-ին այն կազմել է, համապատասխանաբար, 29.3%, 31.2%, 32.3% և 25.1%): Բուժման դիմածների տեսակարար կշիռն ըստ աղքատության մակարդակի տարբերվում է: Եթե հիվանդության դեպքում ոչ աղքատների 40.6%-ն է դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման, ապա աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 31.0%-ն և ծայրահեղ աղքատների՝ 13.8%-ն է դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման:

Առողջության առաջնային պահպանման ծառայություններին բժշկական խորհրդատվության կամ բուժման համար հիվանդանալու դեպքում բնակչությունը մեկ ամսվա մեջ դիմում է միջինը 1.6 անգամ, այդ թվում՝ ոչ աղքատները՝ 1.7 անգամ, աղքատները (առանց ծայրահեղ աղքատների)՝ 1.3 , ծայրահեղ աղքատները՝ 1.1 անգամ: Հետազոտության մեկ ամսվա ընթացքում վերջին այցի ժամանակ որևէ պատճառով բուժհիմնարկների մասնագետներին դիմած բնակչության բաշխումն՝ ըստ բուժհիմնարկների մասնագետների, բերվում է ստորև (տվյալները հաշվարկված են բոլոր պատասխանների նկատմամբ)։

Աղյուսակ 7.1. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին դիմած բնակչության բաշխումն ըստ բուժհիմնարկի մասնագետների և աղքատության մակարդակի, 2014թ.

(տոկոսներով)

Բուժհիմնարկների մասնագետների ցանկ	Ոչ աղքատներ	Աղքատներ (առանց ծայրահեղ աղքատների)	Ծայրահեղ աղքատներ	Ընդամենը
Ընտանեկան բժիշկ	23.6	31.0	0.0	25.0
Մանկաբույժ	8.1	9.6	14.8	8.5
Մանկաբարձ/ գինեկոլոգ	4.4	3.9	0.0	4.2
Թերապևտ	29.1	27.7	74.8	29.1
Նեղ մասնագետ	20.7	17.3	10.4	20.0
Ատամնաբույժ	2.9	0.7	0.0	2.4
Մասնավոր բժիշկ	2.8	1.0	0.0	2.4
Դիագնոստիկ կենտրոն	4.0	3.7	0.0	3.9
Շտապ օգնություն	3.0	4.5	0.0	3.3
Այլ	1.4	0.6	0.0	1.2
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2014թ.

Հարկ է նշել, որ բնակչության 29.1%-ը հիվանդանալու դեպքում խորհրդատվության համար դիմել է թերապևտին, 20.0%-ը՝ նեղ մասնագետին, 25.0%-ը ընտանեկան բժշկին, այն դեպքում, երբ մասնավոր բժիշկներին է դիմել միայն 2.4%-ը:

Աղյուսակ 7.2. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին դիմած բնակչության բաշխումն ըստ բուժհիմնարկի մասնագետների և բնակչության վայրի, 2014թ.

(տոկոսներով)

Բուժհիմնարկի մասնագետների ցանկ	Ք.Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր	Ընդամենը
Ընտանեկան բժիշկ	7.6	35.6	34.5	25.0
Մանկաբույժ	12.5	6.3	6.0	8.5
Մանկաբարձ/ գինեկոլոգ	3.1	5.8	3.9	4.2
Թերապևտ	29.6	26.3	31.7	29.1
Նեղ մասնագետ	27.0	17.6	13.8	20.0
Ատամնաբույժ	2.2	2.6	2.4	2.4
Մասնավոր բժիշկ	5.1	0.9	0.8	2.4
Դիագնոստիկ կենտրոն	7.3	1.9	2.0	3.9
Շտապ օգնություն	4.6	1.7	3.6	3.3
Այլ	1.0	1.3	1.3	1.2
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը. *SSYUZ 2014թ.*

Հարկ է նշել, որ հիվանդանալու դեպքում խորհրդատվության համար ք. Երևանի բնակչությունն ավելի հաճախ դիմել է թերապևտին, իսկ այլ քաղաքների և գյուղերի բնակչությունն՝ ընտանեկան բժշկին:

Աղյուսակ 7.3. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ օգնության համար առողջության առաջնային պահպանման ծառայություններին դիմած բնակչության վճարումների բաշխումը, 2014թ.

(տոկոսներով)

Բուժհիմնարկի մասնագետների ցանկ	Ընդամենը վճարվել է	այդ թվում		
		անձնակազմից որևէ մեկին գնացուցակով	նվերներ կամ ծառայություններ	խորհրդատվության հետ կապված վճարումներ (ոճնտգեն/ լաբորատոր հետազոտություն)
Ընտանեկան բժիշկ	100	40.0	1.7	58.3
Մանկաբույժ	100	53.6	19.2	27.2
Մանկաբարձ/ գինեկոլոգ	100	72.8	0.4	26.8
Թերապևտ	100	50.0	3.2	46.8
Նեղ մասնագետ	100	48.5	3.7	47.8
Ատամնաբույժ	100	98.5	0.0	1.5
Մասնավոր բժիշկ	100	69.5	0.3	30.2
Դիագնոստիկ կենտրոն	100	57.7	0.0	42.3
Շտապ օգնություն	100	33.6	0.0	66.4
Այլ	100	58.0	0.0	42
Ընդամենը	100	73.3	1.0	25.7

Աղբյուրը. *SSYUZ 2014թ.*

Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ, պոլիկլինիկական բուժօգնությունների մասնագետների օգնությանը դիմած բնակչությունը, միջինում իր ծախսերի 73.3%-ը վճարել է անձնակազմից որևէ մեկին գնացուցակով, միայն 1%-ը՝ նվերների տեսքով, իսկ 25.7%-ը՝ ռենտգենի կամ լաբորատոր հետազոտության համար:

Վճարումների չափը տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: Ոչ աղքատների կողմից պոլիկլինիկական բուժօգնություններում անձնակազմից որևէ մեկին գնացուցակով կատարած վճարման միջին չափը 4.0 անգամ ավելին է, քան աղքատներինը:

Ոչ աղքատների կողմից խորհրդատվության հետ կապված վճարումները (ռենտգեն/լաբորատոր հետազոտություն) 1.7 անգամ գերազանցել են աղքատների կողմից կատարված վճարումներին:

Պոլիկլինիկական բուժօգնությունների մասնագետներին դիմած հիվանդների 41.2%-ի մոտ ախտորոշվել է հիպերտոնիա: Վերջին այցի ժամանակ էլեկտրակարդիոգրաֆիա անցել են դիմած հիվանդների 37.5%-ը, իսկ խոլեստերինը ստուգվել է դիմած հիվանդների 26.5%-ի մոտ:

Առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառն ինքնաբուժումն է՝ 55% և ֆինանսական վատ վիճակը՝ 18.%, իսկ բժշկական խորհրդատվության կամ բուժման համար չդիմածների տեսակարար կշիռն ըստ պատճառների և բնակության վայրի, բերված է ստորև.

Աղյուսակ 7.4. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառներն ըստ բնակության վայրի, 2014թ.

(տոկոսներով)

	Ընդամենը	Ք.Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Ընդամենը այդ թվում՝	100	100	100	100
ինքնաբուժում	55.0	60	47.9	55.0
ֆինանսապես ի վիճակի չէի բուժվելու	18.0	14.0	24.5	17.4
շատ հեռու է	0.5	1.0	-	0.5
խնդիրը լուրջ չէր	12.1	4.3	14.4	19.1
կարիք չի եղել	5.5	8.1	4.2	3.5
բժիշկը բարեկամ/ընկեր է	5.2	8.2	3.7	2.8
այլ	3.7	4.4	5.3	1.7

Աղբյուրը. *SSYUZ 2014թ.*

Ըստ բնակության վայրի, հետազոտված բնակչությունը, որպես բժշկական խորհրդատվության կամ բուժման չդիմելու հիմնական պատճառ, նշել է ինքնաբուժումը (երևանաբնակներ՝ 60% , այլ քաղաքների բնակչություն՝ 47.9% և գյուղական բնակչություն՝ 55%), ֆինանսականը (գյուղական բնակչություն՝ 17.4%, այլ քաղաքների բնակչություն՝ 24.5%, երևանաբնակներ՝ 14%): Ֆինանսական պատճառը բնակության բոլոր վայրերում նշվել է որպես երկրորդ կարևոր պատճառ:

2014թ.-ի հետազոտությանը անցած 12 ամիսների ընթացքում բնակչությունը հիվանդանոցներ է դիմել բուժօգնության համար միջինում 2.1 անգամ: Գիշերը հիվանդանոցում է մնացել հիվանդանոց վերջին այցի ժամանակ դիմաձների 56%-ը, որոնք հիվանդանոցում պառկել են միջինում 7.6 օր: Հիվանդանոցներում բուժում ստացած (պառկած) բնակչությունն, ըստ այնտեղ մնալու տևողության, բաշխվել է հետևյալ կերպ, մեկ շաբաթից պակաս՝ 65.8%, մեկ շաբաթից մինչև երկու շաբաթ՝ 23.4% և երկու շաբաթից ավել՝ 10.8%:

Աղյուսակ 7.5. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ բուժօգնության համար հիվանդանոց դիմած բնակչության բաշխվածությունն ըստ վճարման ձևի, մեկ հիվանդի հաշվով, 2014թ.

(տոկոսներով)

	Ընդամենը	այդ թվում			
		Հիվանդանոցի գանձապահին	Վճարումներ անմիջապես բուժ. անձնակազմին (բժիշկներ, բուժ. քույրեր և այլն)	Նվեր (սննդամթերք և այլն) կամ որևէ մատուցած ծառայություն բուժ. Անձնակազմից որևէ մեկին	Այլ վճարումներ, այդ թվում՝ լաբորատոր և ռենտգեն հետազոտությունների կամ դեղորայքի համար
Վիրաբույժ	100	89.3	4.2	0.4	6.1
Ռեանիմատոլոգ	100	63.9	5.5	1.0	29.6
Թերապևտ	100	51.0	7.3	1.2	40.5
Մրտաբան	100	87.7	3.6	0.4	8.3
Մանկաբարձ-գինեկոլոգ	100	58.8	23.3	3.3	14.6
Ուռույղ	100	71.1	6.3	0.3	22.3
Գաստրոէնտերոլոգ	100	51.0	12.6	0.0	36.4
Ուռուցքաբան	100	74.1	6.7	0.0	19.2
Էնդոկրինոլոգ	100	51.2	5.7	2.3	40.8
Նյարդաբան	100	68.0	13.4	1.4	17.2
Այլ	100	61.7	10.2	0.3	27.8
Ընդամենը	100	81.0	6.4	0.7	11.9

Աղբյուրը. SSՀԱՀ 2014թ.

Ինչպես երևում է աղյուսակից, միջինում, յուրաքանչյուր հիվանդ, հիվանդանոցի գանձապահին վճարել է ողջ գումարի 81%-ը, անմիջապես բուժ. անձնակազմին՝ 6.4%-ը, բացի այդ նվերների տեսքով՝ 0.7%, այլ վճարումների տեսքով (լաբորատոր և ռենտգեն հետազոտությունների կամ դեղորայքի համար)՝ 11.9%: Այսպիսով, հիվանդանոցներում հիվանդների ծախսերի 81%-ը մուծվել է գանձապահին: Գանձապահական վճարումներից ամենաբարձր տեսակարար կշիռը գրանցվել է վիրաբույժների, սրտաբանների և ուռուցքաբանների մոտ: Իսկ անմիջապես բուժանձնակազմին վճարումների ամենաբարձր տեսակարար կշիռը դիտվել է թերապևտների և մանկաբարձ-գինեկոլոգների մոտ: Լաբորատոր և ռենտգեն հետազոտությունների կամ դեղորայքի համար ծախսերի ամենամեծ տեսակարար կշիռը գրանցվել է ռեանիմատոլոգների, գաստրոէնտերոլոգների, նյարդաբանների և թերապևտների մոտ:

Ըստ 2014թ.-ի ՏՏԿԱՀ ստացված տվյալների (Հավելված 2 Աղյուսակ A3.9)՝ բժշկական ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են տնային տնտեսությունների սպառողական ծախսերի մոտ 1.8%-ը, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 0.8 %-ը, ոչ աղքատների՝ 1.9 %-ը, իսկ ծայրահեղ աղքատներինը՝ 0.4%-ը :

Ըստ 2014թ.-ի ՏՏԿԱՀ ստացված տվյալների՝ բժշկական ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են տնային տնտեսությունների ամբողջ ծառայությունների վրա կատարված ծախսերի 7.9%-ը:

Հայաստանում անվիճելի է աղքատ տնային տնտեսությունների համար անվճար բժշկական փաթեթի կարևորությունը: Ուստի, հաշվի առնելով, որ այն կախված է ընտանեկան նպաստ ստանալուց, կարևորվում է ոչ միայն նպաստի հասցեականության բարձրացումն, այլև աղքատների և ծայրահեղ աղքատների ընդգրկվածության աստիճանը:

Պետական պատվերի իրավունք ունեցել է բնակչության միայն 7.8%-ը: Ըստ աղքատության մակարդակի՝ պետական պատվերի իրավունք ունեցել է ծայրահեղ աղքատների 6.6%-ը, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 7.9%-ը և ոչ աղքատների՝ 7.8%-ը:

Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների միայն 12.3%-ն է ունեցել այդ փաթեթից օգտվելու իրավունք, այդ թվում՝ ծայրահեղ աղքատների՝ 11.8%-ը, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 12.5%-ը և ոչ աղքատների՝ 12.2%-ը:


Ինչ վերաբերում է ընտանեկան նպաստի համակարգում չհաշվառված տնային տնտեսություններին, ապա պետական պատվերի իրավունք ունեցել է 7.0%-ը, այդ թվում՝ ծայրահեղ աղքատների՝ 3.4%-ը, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 6.6%-ը և ոչ աղքատների՝ 7.3%-ը: Միևնույն ժամանակ տնային տնտեսությունների 1.6%-ը տեղյակ էլ չէին ունեցել են, թե՞ ոչ, այդ փաթեթից օգտվելու իրավունք, այսինքն՝ առկա է չտեղեկացված լինելու հանգամանքը:

Գծապատկեր 7.1-ում ներկայացված է ընդհանուր սպառման մեջ առողջապահությանն ուղղված ծախսերի բաշխումն՝ ըստ քվինտիլային խմբերի: Առողջապահության ծառայությունների վրա ծախսերի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր սպառման ագրեգատի նկատմամբ ամենահարուստ քվինտիլային խմբի համար ավելի բարձր է, քան ամենաաղքատ քվինտիլային խմբում (8.2%՝ 2.9%-ի դիմաց): Հավելված 2-ի Աղյուսակ A3.9-ից պարզ երևում է, որ եթե ամենաաղքատ քվինտիլում առողջապահության ծառայությունների

վրա ծախսերը զիջում են այդ ծառայությունների վրա միջին ծախսին 3.7 անգամ, ապա ամենավերին քվինտիլի բնակչության առողջապահության ծառայությունների վրա կատարված ծախսերը 2.9 անգամ գերազանցում են այդ ծառայությունների վրա միջին ծախսին:

Գծապատկեր 7.1. Հայաստան. Առողջապահության ծառայությունների վրա ծախսերի մասնաբաժինը բնակչության ընդհանուր սպառման ագրեգատի նկատմամբ, ըստ քվինտիլային խմբերի, 2014թ.

(տոկոսներով)



Աղբյուրը. SS4ULZ 2014թ.

Ոչ պակաս կարևոր ցուցանիշ է ամենամոտ բուժկետի հեռավորությունը տնային տնտեսությունից: Ըստ 2014թ.-ի հետազոտության, նման տվյալներ ստացվել են միայն գյուղական բնակավայրերով: Ըստ այդ տվյալների, գյուղաբնակ տնային տնտեսությունների 72.3%-ը պատասխանել է, որ բուժկետը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա: Միննույն ժամանակ, տնային տնտեսությունների 0.5 %-ը պատասխանել է, որ այն գտնվում է 10 կմ-ից հեռու: Ըստ սպառման քվինտիլային խմբերի, տվյալները բերված են աղյուսակ 7.6-ում: Գյուղական բնակավայրերում բուժկետի մատչելիությունն ըստ սպառման քվինտիլների տարբերվում է: Այն տնային տնտեսությունների տեսակարար կշիռը, որոնց կողմից արձանագրվել է բուժկետի՝ ավելի քան 10 կմ հեռու գտնվելու փաստը, ըստ սպառման քվինտիլների տատանվում է 0%-ից հինգերորդ քվինտիլում մինչև 0.4%-ը առաջին քվինտիլում:

Աղյուսակ 7.6. Հայաստան. Գյուղական բնակավայրերում բուժօգնության մատչելիությունն ըստ սպառման քվինտիլների, 2014թ.

(տոկոսներով)

Հեռավորությունը	Քվինտիլներ					Ընդամենը
	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	
0-1 կմ	80.7	71.7	75.9	69.6	64.0	72.3
1-3 կմ	15.6	24.4	19.8	26.3	33.4	24.1
4-5 կմ	1.3	2.5	1.8	1.9	1.2	1.7
6-10 կմ	2.0	0.6	1.5	1.8	1.4	1.4
>10 կմ	0.4	0.8	1.0	0.4	-	0.5

Աղբյուրը. *SSՀԱՀ 2014թ.*

Հետազոտված տնային տնտեսությունների ծախսերի մեջ դեղորայքի ձեռք բերման համար կատարված ծախսերը կազմել են 4.0%: Դեղորայքի ձեռք բերման համար կատարված ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով կազմել են ընդամենը 1 620 դրամ, ընդ որում, ոչ աղքատներինը՝ 2 005 դրամ, աղքատներինը՝ 752 դրամ և ծայրահեղ աղքատներինը՝ 320 դրամ: Ոչ աղքատ բնակչության դեղորայքի ձեռք բերման համար կատարված ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով մոտ 3 անգամ գերազանցում են աղքատների նույնանման ծախսերին, իսկ ծայրահեղ աղքատների նկատմամբ՝ 6 անգամ:

Կարևոր ցուցանիշներից է նաև ամենամոտ դեղատան հեռավորությունը տնային տնտեսությունից: Եթե քաղաքային բնակավայրերում դեղատների ցանցը բավականին զարգացած է, ապա գյուղական վայրերում կան մատչելիության խնդիրներ: Ըստ 2014թ.-ի հետազոտության տվյալների գյուղաբնակ տնային տնտեսությունների 31.6%-ը պատասխանել է, որ դեղատունը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա, 28.2%-ը, պատասխանել է, որ այն գտնվում է 10 կմ-ից հեռու: Ըստ քվինտիլային խմբերի, տվյալները բերված են Աղյուսակ 7.7-ում: Ամենահարուստ՝ հինգերորդ քվինտիլի համար դեղատան մատչելիությունը շատ չի տարբերվում ամենաաղքատ՝ առաջին քվինտիլից: Տնային տնտեսությունների տեսակառար կշիռը, որոնք նշել են, որ ամենամոտ դեղատունը գտնվում է գյուղից ավելի քան 10 կմ հեռու, ըստ սպառման քվինտիլների, տատանվում է 24-ից մինչև 32%-ը:

Աղյուսակ 7.7. Հայաստան. Դեղատան մատչելիությունը գյուղական բնակավայրերում 2014թ.-ին, ըստ սպառման քվինտիլների

(տոկոսներով)

Հեռավորությունը	Քվինտիլներ					Ընդամենը
	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	
0-1 կմ	34.7	31.3	33.5	29.0	30.2	31.6
1-3 կմ	15.4	16.9	13.5	15.2	17.1	15.6
4-5 կմ	6.1	8.3	5.2	5.0	6.2	6.1
6-10 կմ	19.0	13.2	18.7	19.0	22.6	18.5
>10 կմ	24.8	30.3	29.1	31.8	23.9	28.2

Աղբյուրը. *SSՀԱՀ 2014թ.*

Մինչև 5 տարեկան երեխա ունեցող տնային տնտեսությունները պրոֆիլակտիկ գննման կամ հետձննդյան խորհրդատվության համար հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում նշված տարիքի երեխաների 35.7%-ին բերել են պոլիկլինիկա, իսկ չհաճախման պատճառները (պատասխանների նկատմամբ) բաշխվել են հետևյալ կերպ՝ ծառայություններն անհրաժեշտ չեն՝ 87%, բուժսպասարկման որակը անբավարար է՝ 0.6%, շատ հեռու է՝ 1.0%, շատ թանկ է՝ 0.4%, բուժհաստատությունը փակ է՝ 0.7%: Պոլիկլինիկա հաճախած տնային տնտեսությունների 27.3%-ը պատասխանել է, որ երեխային կատարվել է իմունիզացիա, 93.6%-ը՝ չափել են երեխայի քաշը, 92.2%-ը չափել են երեխայի հասակը, 87.9%-ը՝ ստացել են խորհրդատվություն երեխայի աճի և զարգացման վերաբերյալ, 36.9%-ն էլ կատարել է արյան հետազոտություն:

Գլուխ 8. Կրթությունը և աղքատությունը

Կրթությունը կարող է օգնել մարդկանց դուրս գալ աղքատությունից: Կրթությունը դռներ է բացում աշխատանքի և ֆինանսական վարկերի առջև: Կրթությունը տալիս է մարդկանց գիտելիք և հմտություններ, որոնք անհրաժեշտ են եկամուտների ավելացման և զբաղվածության հնարավորությունների ընդլայնման համար: Երբ կրթությունն ունի լայն տարածում և հասանելի է աղքատներին, կանանց և խոցելի խմբերին, ապա այն ունի նաև տնտեսական աճի լայն վերաբաշխվածության հեռանկար: Մյուս կողմից, աղքատությունը դրդում է ծնողներին երեխաներին հանել դպրոցից և ուղարկել աշխատելու, քանի որ վճարունակ չեն:

Հայաստանում գրեթե ողջ բնակչությունը գրագետ է: 2011թ.ի մարդահամարը ցույց տվեց, որ Հայաստանի բնակչության միայն 0.3 տոկոսը գրաճանաչ չէ: Հանրակրթությունը մատչելի է բոլորի համար թե՛ տղաների և թե՛ աղջիկների, բայց ոչ հավասարապես: 2014/2015 ուսումնական տարում սեռային հավասարության ցուցանիշը հանրակրթական դպրոցներում (տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը) կազմել է 1.05, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 1.01, հիմնական դպրոցում՝ 1.01, ավագ դպրոցում՝ 1.22:

Ի տարբերություն հիմնական կրթության, սովորողների ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում և բարձրագույն կրթական հաստատություններում համեմատաբար ավելի ցածր է, իսկ աղքատների և ոչ աղքատների ընդգրկվածության տարբերությունը բավական նկատելի: Բարձրագույն կրթության հետ կապված բարձր ծախսերը և հատկապես դրանց մատչելիությունը, կրթություն ստանալուց հետո բարձր աշխատավարձ ստանալու ցածր հավանականությունն այն հիմնական պատճառներն են, որով կարելի է բացատրել հիմնական և, մասնավորապես, ընդհանուր միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության կրթական համակարգից դուրս մնալը:

2014թ.-ին կրթության մասով համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժինը 2008թ.-ի համեմատ (Աղյուսակ 2.4.) նվազել է (2008թ.-ին՝ 13.7%-ից 2014թ.-ին կազմելով 11.9%-ը): Ծախսերի ենթաձյուղային կառուցվածքում հիմնական շեշտադրումը դրված է միջնակարգ կրթության վրա:

Ներդիր 8.1

Կրթության ոլորտի 2014 թվականի գործունեության վերաբերյալ

Կրթության բնագավառի գերխնդիրը կրթության որակի բարձրացումն է ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

2014 թվականին հանրակրթության արդյունավետության բարելավման նպատակով գործածության են երաշխավորվել ՀՀ հանրակրթական դպրոցներում նոր ուսումնական ծրագրերով փորձարկված 36 անուն դասագրքեր: Հաստատվել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգը:

Երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթության անցումն ապահովելու նպատակով «Կրթության մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նշյալ ՀՀ օրենքների նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավարություն, իսկ այնուհետև՝ ՀՀ Ազգային Ժողով:

Հանրակրթական դպրոցների 5-րդ դասարանում «Ազգային երգ ու պար» առարկայի ներդրման նպատակով մշակվել են համապատասխան չափորոշիչի և առարկայական ծրագրի նախագծերը: Իրականացված աշխատանքների արդյունքում հաստատվել են «Ազգային երգ ու պար» և «Երաժշտություն» առարկաների փորձնական ծրագրերը, որոնք իրականացվում են հանրապետության հանրակրթական 13 հիմնական դպրոցի 5-րդ դասարաններում:

2014 թվականին կարևորվել են ազգային փոքրամասնությունների համար դպրոցներում ուսումնական բազայի բարելավման և կադրերի մասնագիտական զարգացման գործընթացները: Ներկայացված հայտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեի միջոցներով տպագրվել և համապատասխան դպրոցներին են տրամադրվել «Եզդիերեն»՝ 1-ին, 6-րդ, 7-րդ, 11-րդ և «Քրդերեն»՝ 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների դասագրքերը:

Հանրակրթական դպրոցներում ազգային փոքրամասնությունների կարողությունների զարգացման նպատակով ՀՀ Արագածոտնի մարզի Ալազյազ գյուղում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել է քրդերենի 16 ուսուցիչ:

Հանրակրթության ոլորտի գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերից է եղել ՀՀ-ում ուսումնական համակարգիչների արտադրության զարգացման հայեցակարգից բխող գործողությունների ժամանակացույցի մշակումը: Հաշվի առնելով, որ Հայաստանում արդեն իսկ իրականացվում է դյուրակիր համակարգիչների արտադրություն, մշակվել է «Առաջին դասարանի աշակերտներին անվճար համակարգիչ տրամադրելու՝ «Մեկ երեխա-մեկ

համակարգիչ» փուլային ծրագրին և փորձնական փուլի նկարագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Ծրագրի փորձնական փուլի ֆինանսավորումն իրականացվելու է ՀՀ-ում գործող Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի միջոցներով, որի շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական դպրոցների առաջին դասարանի աշակերտներին անվճար տրամադրվելու են «Արմթաբ» պլանշետներ: Փորձնական ծրագիրը կիրականացվի 2015-2019թթ.՝ հնարավորություն ընձեռելով ծրագրում ընդգրկել ՀՀ Վայոց ձորի մարզի տարրական դպրոցի բոլոր դասարանները: 2019 թվականից նախատեսվում է ծրագրի աստիճանական ընդլայնում՝ ներառելով 1-ից 2 նոր մարզեր:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման նպատակով իրականացվել են մի շարք աշխատանքներ: ՀՀ մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելու նպատակով հաստատվել է «Նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտում կրեդիտային համակարգով ուսումնառության օրինակելի կարգը»: Կազմակերպվել են նաև վերապատրաստման դասընթացներ ՄԿՈԻ համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մեխանիզմների վերաբերյալ: 2014-2015թթ. ուսումնական տարվանից որոշ մասնագիտությունների գծով կրեդիտային համակարգը փորձնական ներդրվել է պետական քոլեջներում:

Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների վերապատրաստման և հավաստագրման համակարգի ներդրման նպատակով մշակվել և հաստատվել են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստող կազմակերպության ընտրության և դիմած անձին վերապատրաստելու, ինչպես նաև նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրման քննության կազմակերպման և հավաստագրման, հավաստագրման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգերը, որոնք ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացել են պետական գրանցում: Միաժամանակ, մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգը:

12 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվել են մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգի ստեղծման

աշխատանքներ: Կարիերայի ուղղորդման աշխատանքների արդյունավետությունը գնահատելու նպատակով մշակվել են մշտադիտարկման ցուցանիշներ: Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից հրավիրված միջազգային փորձագետի մասնակցությամբ իրականացվել են մշտադիտարկման այցելություններ պետական քոլեջներ:

Միաժամանակ, ընտրվել և հաստատվել են ՄԿՈՒ ևս 10 հաստատություններ, որոնց հետ իրականացվել են աշխատանքներ կարիերայի ստորաբաժանումների ներդրման և զարգացման ուղղությամբ:

ՄԿՈՒ ոլորտի մանկավարժների վերապատրաստման նոր մեխանիզմների ներդրման նպատակով մշակվել և հաստատվել է նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման կարգը, որը ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացել է պետական գրանցում:

2014 թվականին աշխատանքներ են իրականացվել բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի զարգացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Իրականացվել է որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) ներդրման գործընթացից բխող մասնագիտությունների ցանկի և շնորհվող որակավորումների վերանայման գործընթացը:

Որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրիչների մեթոդաբանության մշակման նպատակով ուսումնասիրվել է միջազգային փորձը: Միջազգային փորձագետների հետ համատեղ «TEMPUS «ARMENQA» ԵՄ ծրագրի շրջանակում վերանայվել և մշակվել են ՈԱՇ-ի բարձրագույն կրթության մակարդակները և որակավորումների ազգային շրջանակի մակարդակների նկարագրիչները:

Բարձրագույն մասնագիտական կրթության կարևորագույն խնդիրներից է եղել տարբեր սոցիալական խմբերին ուղղված ուսման վարձի փոխհատուցման մեխանիզմների և անվճար կրթության ընդլայնումը: Մշակվել է «ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի N1183-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը հնարավորություն է ընձեռում աջակցելու սոցիալական խոցելի խմբերին:

Բարձրագույն կրթության համակարգում առկա սոցիալական խնդիրների վերլուծության արդյունքում մշակվել և հաստատվել է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու նպատակով բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառող ուսանողների միջին որակական գնահատականի (ՄՈԳ) նվազագույն շեմը: Արդյունքում բակալավրի կրթական ծրագրի ՄՈԳ-ի շեմը սահմանվել է 40%, իսկ մագիստրոսի կրթական ծրագրի շեմը՝ 50%:

Ինչպես նաև հասարակության իրազեկվածության բարձրացման նպատակով իրականացվել է փորձնական վարկանիշավորում հանրապետության 57 ուսումնական հաստատություններում (ներառյալ մասնաճյուղերը):

Հաստատվել են ՀՀ բարձրագույն ուսումնական համակարգի ազգային վարկանիշավորման մեթոդաբանությունը, ցուցանիշները և հաշվարկի մեխանիզմները: Կազմվել է 2014թ. բուհերի ազգային վարկանիշավորում՝ ըստ վեց հիմնական չափորոշիչների, որի արդյունքները տեղադրվել են «<http://ranking.amedu.am/index.php>» կայքում:

Պետական 10 բուհում իրականացվել են դրամաշնորհային նորարարական ծրագրեր: Բուհերում նորարարական ծրագրերի իրականացումը պայմանավորված է յուրահատուկ և մեծ ծավալի սարքավորումների գնման անհրաժեշտությամբ, որը ժամանակատար գործընթաց է՝ ըստ Համաշխարհային Բանկի (ՀԲ) գնումների ուղեցույցերի և գնման ընթացակարգի: Արդյունքում առաջացել է «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի իրականացման ժամկետների երկարացման անհրաժեշտություն, որը համաձայնեցվել է նաև ՀԲ-ի հետ:

Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի_(ՄԿԿՏՀ) ներդրման նպատակով իրականացվել են համապատասխան ցուցանիշների գործարկման և վերանայման աշխատանքներ: «Սիներջի ինթերնեյշնլ սիստեմս ընկերությունն» իրականացրել է ՄԿԿՏՀ-ի երաշխիքային սպասարկումը, որի վերջնաժամկետը 2015 թվականի հունվարն էր:

2014թ. իրականացվել են կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014թթ. միջոցառումների համալիր ծրագրի մշտադիտարկման և արդյունքների մասին պարբերական հաշվետվությունների ներկայացման աշխատանքներ: Մասնավորապես, ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական կայքում (www.edu.am) գործում է «Հակակոռուպցիոն ծրագրեր» տեղեկատվական էջ: Փոփոխություններ և լրացումներ են կատարվել կրթության ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտերում, իսկ նոր մշակված իրավական ակտերի նախագծերը դրվել են հանրային քննարկման՝ www.edu.am և www.ktak.am կայքերում, ինչը հնարավորություն է ընձեռում հանրությանը մասնակցություն ունենալ իրավական ակտերի նախագծերի մշակմանը:

Ապահովվել է նաև ուսումնական հաստատություններում գնումների թափանցիկությունը և հրապարակայնությունը: Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը տեղադրված է 1386 դպրոցում, իսկ մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը՝ 188 մասնագիտական ուսումնական հաստատությունում:

Բնականոն գործել է ավարտական փաստաթղթերի հաշվառման համակարգը, որի

միասնական տեղեկատվական շտեմարանում ամփոփված են հանրակրթական դպրոցների, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների տվյալները՝ վերջին 7 ուսումնական տարվա համար:

ՀՀ ԿԳ նախարարության գործունեության թափանցիկության և հանրային իրազեկման բարձրացման նպատակով հանրապետական ԶԼՄ-ներում լուսաբանվել է կրթության ոլորտում [կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի միջոցառումների համալիր ծրագիր](#)ը: Հակակոռուպցիոն թեմաների ուսուցման կազմակերպման շրջանակներում համապատասխան թեմաներ ուսուցանվում են հանրակրթական դպրոցներում՝ «Հասարակագիտություն», նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ «Իրավունքի հիմունքներ», իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ «Տնտեսագիտության հիմունքներ», «Իրավագիտության հիմունքներ» և «Քաղաքագիտության հիմունքներ» առարկաների ծրագրերի շրջանակներում:

ՀՀ կրթության ոլորտում 2015-2017թթ. կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների նախագծի մշակման աշխատանքներն իրականացվելու են ՀՀ արդարադատության նախարարության կողմից համակարգվող «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգից» բխող հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի մշակման աշխատանքների շրջանակում, որը տեղադրված է ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում:

2014թ. աշխատանքներ են իրականացվել ՀՀ գիտական աստիճանաշնորհման համակարգում՝ չափանիշների հստակեցման ուղղությամբ: Ուսումնասիրվել են ՀՀ գիտական աստիճանաշնորհման ոլորտի բոլոր իրավական ակտերը:

Մշակվել և հաստատվել է ՀՀ գիտական այն մասնագիտությունների նոր անվանացանկը, որոնց գծով շնորհվում են գիտական աստիճաններ և գիտական կոչումներ: Ձևավորվել է նաև մասնագիտական խորհուրդների նոր ցանց, վերանայվել է ՀՀ ԲՈՀ-ի պաշտոնական կայքը:

ՀՀ կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված ՀՀ կրթության և գիտության նախարարության 6 միջոցառում կատարվել է սահմանված ժամկետում:

2015 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը շարունակելու է հետամուտ լինել նախադպրոցական կրթության և հանրակրթության հասանելիության ու որակի բարելավման, դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման համակարգի ընդլայնման, մասնագիտական կրթության շարունակական զարգացման խնդիրներին: 2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում նախատեսվում է նաև անցկացնել շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնություն:

Ներդիր 8.2

Նախադպրոցական հաստատությունների գործունեություն

2014թ. ՀՀ-ում գործել է 713 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (ՆԴՀ), որոնցից 516-ը՝ մանկապարտեզ, 168-ը՝ մսուր-մանկապարտեզ, 29-ը՝ դպրոց-մանկապարտեզ: ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 655-ը համայնքային ենթակայության է, 6-ը՝ գերատեսչական և 52-ը՝ ոչ պետական: Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում (0-5 տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 28.7%, քաղաքային համայնքներում՝ 36.0%, գյուղական համայնքներում՝ 16.6%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 28 երեխա, տեղերի փաստացի զբաղվածությունը՝ 90.0%: Միջին հաշվով մեկ ՆԴՀ հաճախել է 102 երեխա, մեկ մանկավարժին բաժին է ընկել 12 երեխա:

ՆԴՀ-ների գործունեության ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ.

	ՆԴՀ-ների քանակը, միավոր	Խմբերի քանակը, միավոր		Տեղերի քանակը, միավոր	Երեխաների թվաքանակը, մարդ	
		ընդամենը	որից՝ 3 և բարձր տարիքի երեխաների		ընդամենը	նրանցից՝ աղջիկներ
ք.Երևան	214	1 133	1 004	33 886	32 000	15 517
Արագածոտն	23	84	75	2 200	2 256	1 083
Արարատ	77	218	202	8 303	6 269	037
Արմավիր	57	182	165	5 775	4 715	2 314
Գեղարքունիք	44	113	108	3 694	3 265	1 652
Լոռի	64	149	137	4 954	4 451	2 169
Կոտայք	54	233	192	6 886	6 423	3 029
Շիրակ	51	175	152	4 799	4 546	2 245
Սյունիք	51	172	146	4 801	4 352	2 215
Վայոց ձոր	18	41	41	140	1 029	528
Տավուշ	60	137	123	4 415	3 423	1 680
Ընդամենը ՀՀ	713	2 637	2 345	80 853	72 729	35 469

ՆԴՀ-ներ հաճախող երեխաների թվաքանակն ըստ տարիքի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ.

	Մինչև 1.5 տարեկան		1.5-ից մինչև 3 տարեկան		3 – 5 տարեկան		6 տարեկան		7 տարեկան	
	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ
Երևան	84	32	4 191	2 113	19 053	9 117	8 591	4 217	81	38
Արագածոտն	-	-	193	97	1 594	718	408	236	61	32
Արարատ	-	-	430	207	3 904	1 862	1 898	946	37	22
Արմավիր	-	-	287	148	3 072	1 549	1 356	617	-	-
Գեղարքունիք	-	-	112	57	1 877	942	1 206	603	70	50
Լոռի	-	-	323	168	2 587	1 250	1 477	725	64	26
Կոտայք	-	-	764	367	3 360	1 615	2 184	981	115	66
Շիրակ	-	-	493	242	2 295	1 128	1 668	819	90	56
Սյունիք	4	2	561	284	2 579	1 320	1 202	605	6	4
Վայոց ձոր	-	-	3	2	698	353	328	173	-	-
Տավուշ	-	-	325	173	2 085	1 022	1 013	485	-	-
Ընդամենը ՀՀ	88	34	7 682	3 858	43 104	20 876	21 331	10 407	524	294

Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում (0-5 տարեկան բնակչությունից) ըստ սեռի և տարիքային խմբի, 2009-2014թթ.

մարդ

		2009	2010	2011	2012	2013	2014
Աղջիկներ	Ընդամենը	25.0	26.0	27.4	29.6	28.3	29.9
	0-2 տարեկան Բնակչությունից	6.8	6.9	7.4	8.1	6.5	6.6
	3-5 տարեկան Բնակչությունից	45.0	47.6	50.1	52.1	49.7	52.9
Տղաներ	Ընդամենը	22.0	23.1	24.6	26.4	26.4	27.7
	0-2 տարեկան Բնակչությունից	5.7	5.7	6.6	7.4	6.1	5.8
	3-5 տարեկան Բնակչությունից	39.7	42.7	44.9	46.4	46.3	49.2
Ընդամենը		23.3	24.4	25.9	27.9	27.3	28.7
0-2 տարեկան բնակչությունից		6.2	6.3	7.0	7.8	6.3	6.2
3-5 տարեկան բնակչությունից		42.2	45.0	47.3	49.1	47.0	50.9

Հանրակրթական հաստատությունների գործունեություն

Հանրակրթության հիմնական ցուցանիշները, 2014/2015 ու. տարի

Դպրոցների քանակը, միավոր	Աշակերտների թվաքանակը, մարդ		Աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը, %			Ավարտական վկայական ստացածների թվաքանակը 2013թ., մարդ		Ուսուցիչների թվաքանակը, մարդ	
			ընդամենը	այդ թվում՝ ըստ կրթական աստիճանի		հիմնական	միջնակարգ կրթությամբ		
				տարրական	հիմնական				ավագ
	ընդամենը	1-ին դասարանում				հիմնական կրթությամբ	միջնակարգ կրթությամբ		
1 437	359 559	38 340	87.8	93.1	92.6	72.4	30 030	23 700	39 018

Հանրակրթական հաստատությունների քանակական բաշխվածություն:

2014/2015 ուսումնական տարում հանրապետությունում գործել են հանրակրթական ծրագրեր իրականացնող 1 437 հաստատություններ:

Հանրակրթական դպրոցների քանակն ըստ ՀՀ մարզերի և քաղաքային ու գյուղական համայնքների, 2014/2015 ու. տարի

միավոր

	Ընդամենը	այդ թվում		Քաղաքային համայնքներ			Գյուղական համայնքներ		
		պետական	ոչ պետական	ընդամենը	այդ թվում՝		ընդամենը	այդ թվում՝	
					պետական	ոչ պետական		պետական	ոչ պետական
քերական	257	220	37	257	220	37	-	-	-
Արագածոտն	122	122	-	13	13	-	109	109	-
Արարատ	112	112	-	21	21	-	91	91	-
Արմավիր	123	121	2	28	26	2	95	95	-
Գեղարքունիք	126	126	-	27	27	-	99	99	-
Լոռի	168	167	1	65	64	1	103	103	-
Կոտայք	105	104	1	39	39	-	66	65	1
Շիրակ	171	167	4	58	54	4	113	113	-
Սյունիք	121	121	-	36	36	-	85	85	-
Վայոց ձոր	50	50	-	10	10	-	40	40	-
Տավուշ	82	81	1	19	18	1	63	63	-
Ընդամենը ՀՀ	1 437	1 391	46	573	528	45	864	863	1

¹ Ավագ դպրոցում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը ցածր է, քանի որ հիմնական դպրոցն ավարտելուց հետո համապատասխան տարիքի բնակչության 19.1%-ն ուսումը շարունակել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Աշակերտների թվաքանակ և բաշխվածություն:

2014/2015 ուս.տարում հանրակրթական դպրոցների նախագծային հզորությունը (աշակերտական տեղերի նախատեսված քանակ) կազմել է 676 558 միավոր, աշակերտների թվաքանակը՝ 359 559, որոնց 47.7%-ը աղջիկ են: Դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը¹ կազմել է 87.8%, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 93.1%, հիմնական դպրոցում՝ 92.6%, ավագ դպրոցում՝ 72.4%: Աշակերտների զուտ ընդգրկվածության ցուցանիշը² տարրական դպրոցում կազմել է 90.8%, հիմնական դպրոցում՝ 92.0%: Աշակերտների «ճշգրտված զուտ ընդգրկվածության» ցուցանիշը³ տարրական դպրոցում կազմել է 91.1%, հիմնական դպրոցում՝ 94.5%: Մեռային հավասարության ցուցանիշը (տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը) կազմել է 1.05, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 1.01, հիմնական դպրոցում՝ 1.01, ավագ դպրոցում՝ 1.22:

Հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014/2015 ուս. տարի

	Պետական դպրոցներ			Ղչ պետական դպրոցներ			Ընդամենը		
	աղջիկ	Տղա	ընդամենը	աղջիկ	տղա	ընդամենը	աղջիկ	տղա	ընդամենը
Երևան	51 879	56 089	107 968	2 908	3 526	6 434	54 787	59 615	114 402
Արագածոտն	8 104	9 379	17 483	-	-	-	8 104	9 379	17 483
Արարատ	15 358	16 659	32 017	-	-	-	15 358	16 659	32 017
Արմավիր	15 376	17 674	33 050	193	203	396	15 569	17 877	33 446
Գեղարքունիք	13 587	15 71	29 301	-	-	-	13 587	15 714	29 301
Լոռի	14 342	15 356	29 698	20	42	62	14 362	15 398	29 760
Կոտայք	16 061	17 512	33 573	55	75	130	16 116	17 587	33 703
Շիրակ	14 361	15 844	30 205	194	219	413	14 555	16 063	30 618
Սյունիք	8 083	8 368	16 451	-	-	-	8 083	8 368	16 451
Վայոց ձոր	2 994	3 524	6 518	-	-	-	2 994	3 524	6 518
Տավուշ	7 806	7 959	15 765	50	45	95	7 856	8 004	15 860
Ընդամենը ՀՀ	167 951	184 078	352 029	3 420	4 110	7 530	171 371	188 188	359 559

Հանրակրթական դպրոցներից հեռացած (ուսումն անավարտ թողած) աշակերտների թվաքանակն ըստ պատճառի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014/2015 ուս.տարվա սկզբին

	Ընդամենը	այդ թվում՝ ըստ պատճառի							
		սոցիալ-տնտեսական վատ պայմաններ	ճնողները չեն ուղարկում դպրոց (թույլ չեն տալիս)	անկարողություն			բազմահաշմանդամություն	տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ	մահացել է
				լսողական խանգարում	հենաշարժողական	մտավոր թերզարգացում			
Երևան	15	11	-	-	1	2	-	-	1
Արագածոտն	3	2	1	-	-	-	-	-	-
Արարատ	23	16	5	-	1	1	-	-	-
Արմավիր	57	45	10	-	-	-	-	-	2

¹ Կրթահամակարգում համախառն ընդգրկվածության ցուցանիշ՝ տվյալ կրթահամակարգի դասարանների աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է մշտական բնակչության նույն կրթահամակարգի համար պաշտոնապես սահմանված տարիքային խմբի թվաքանակի նկատմամբ:

² Կրթահամակարգում զուտ ընդգրկվածության ցուցանիշ՝ տվյալ կրթահամակարգի համար պաշտոնապես սահմանված տարիքային խմբի համապատասխան դասարանների աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է մշտական բնակչության նույն տարիքային խմբի թվաքանակի նկատմամբ:

³ Կրթահամակարգում «ճշգրտված զուտ ընդգրկվածության» ցուցանիշ՝ տվյալ կրթահամակարգի համար պաշտոնապես սահմանված տարիքային խմբի աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է մշտական բնակչության նույն տարիքային խմբի թվաքանակի նկատմամբ:

	Ընդամենը	աղ թվում՝ ըստ պատճառի							
		սոցիալ-տնտեսական վատ պայմաններ	ծնողները չեն ուղարկում դպրոց (թույլ չեն տալիս)	անկարողություն			բազմա-հաշման-դամություն	տեղա-փոխվել է քրեակատարողական հիմնարկ	մահացել է
				լսողական խանգարում	հենա-շարժողական	մտավոր թերզարգացում			
Գեղարքունիք	7	14	9	-	1	-	3	-	
Լոռի	19	9	9	-	-	-	-	1	
Կոտայք	8	6	2	-	-	-	-	-	
Շիրակ	45	10	11	-	-	-	-	24	
Սյունիք	11	6	3	1	-	-	-	1	
Վայոց ձոր	4	4	-	-	-	-	-	-	
Տավուշ	32	20	9	-	-	2	-	1	
Ընդամենը ՀՀ	244	43	59	1	3	5	3	25	

Հանրակրթական դպրոցների հիմնական կրթությամբ շրջանավարտների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ.

մարդ

	Ավարտական վկայական ստացածներ		նրանցից՝					
			գերազանց առաջադիմությամբ		շարունակել են ուսումը ավագ դպրոցում		ընդունվել են ՆՄՌԻՀ կամ ՄՄՌԻՀ	
	ընդամենը	աղջիկներ	ընդամենը	աղջիկներ	ընդամենը	աղջիկներ	ընդամենը	աղջիկներ
Երևան	8 860	4 324	426	264	4 174	2 184	1 978	888
Արագածոտն	1 534	716	48	23	1 015	522	132	30
Արարատ	2 634	1 229	73	46	1 658	846	424	153
Արմավիր	2 849	1 293	113	68	1 826	868	352	151
Գեղարքունիք	2 640	124	192	121	1 802	907	361	128
Լոռի	2 571	1 242	55	33	1 567	804	410	175
Կոտայք	2 912	1 366	94	65	1 803	982	566	179
Շիրակ	2 668	1 271	185	136	1 965	983	336	122
Սյունիք	1 399	729	138	83	923	496	165	52
Վայոց ձոր	609	280	32	20	491	243	27	4
Տավուշ	1 354	651	43	30	776	415	220	74
Ընդամենը ՀՀ	30 030	14 355	1 399	889	18 000	9 250	4 971	1 956

շարունակություն

	Ուսումը կիսատ են թողել		Մնացել են 9-րդ դասարանում		Հեռացվել են դպրոցից	
	ընդամենը	աղջիկներ	ընդամենը	աղջիկներ	ընդամենը	աղջիկներ
Երևան	19	6	11	6	-	-
Արագածոտն	7	3	9	3	10	7
Արարատ	15	3	16	5	6	1
Արմավիր	18	12	9	3	30	9
Գեղարքունիք	13	4	2	1	6	-
Լոռի	9	2	3	1	14	8
Կոտայք	2	-	12	3	-	-
Շիրակ	11	1	5	1	11	-
Սյունիք	5	1	-	-	2	1
Վայոց ձոր	-	-	1	-	-	-
Տավուշ	6	3	4	1	1	1
Ընդամենը ՀՀ	105	35	72	24	80	27

Հանրակրթական դպրոցների միջնակարգ կրթությամբ շրջանավարտների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ.

մարդ

	Ավարտական փաստաթուղթ ստացածներ		նրանցից՝					
			գերազանցությամբ մեդալով		նախորդ ուսումնական տարիներին որևէ քննություն(ներ) չհանձնելու պատճառով ավարտական փաստաթուղթ չստացածներ		Ընդունվել են ՆՄՈւՀ, ՄՄՈւԿ կամ ԲՈւՀ	
	ընդամենը	աղջիկներ	ընդամենը	աղջիկներ	ընդամենը	աղջիկներ	ընդամենը	աղջիկներ
Երևան	5 853	2 917	166	102	3	2	4 334	2 345
Արագածոտն	1 420	715	-	-	14	6	594	397
Արարատ	2 146	1 173	94	61	6	-	860	545
Արմավիր	2 304	1 208	67	38	10	1	1 165	702
Գեղարքունիք	2 525	1 342	97	64	11	3	933	586
Լոռի	2 034	1 135	11	8	30	20	1 025	632
Կոտայք	2 094	1 144	7	6	2	1	956	574
Շիրակ	2 307	1 186	15	11	12	1	1 115	643
Սյունիք	1 194	614	10	6	1	-	802	469
Վայոց ձոր	571	295	11	7	3	-	264	142
Տավուշ	1 252	703	36	20	2	1	732	466
Ընդամենը ՀՀ	23 700	12 432	514	323	94	35	12 780	7 501

Հանրակրթական պետական և ոչ պետական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի, 2009-2014թթ.

%

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2009	90.2	91.7	88.9
2010	90.1	91.8	88.6
2011	86.3	88.5	84.4
2012	89.2	91.7	86.9
2013	87.9	90.5	85.7
2014	87.8	89.9	85.9

Հանրակրթական պետական և ոչ պետական դպրոցներում գենդերային հավասարության ցուցանիշն ըստ հանրակրթական ծրագրերի մակարդակի (տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը), 2009-2014թթ.

	Տարրական դպրոց	Հիմնական դպրոց	Ավագ դպրոց	Ընդամենը
2009	1.00	1.01	1.12	1.03
2010	1.01	1.01	1.16	1.04
2011	1.01	1.01	1.20	1.05
2012	1.02	1.02	1.21	1.06
2013	1.01	1.02	1.22	1.06
2014	1.01	1.01	1.22	1.05

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն

2014/2015 ու. տարում հանրապետությունում գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող 44 պետական ուսումնական հաստատություններ, որոնցից 24-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և 20-ը՝ միջին մասնագիտական: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների թվաքանակը կազմել է 7 295, որոնց 25.2%-ը կանայք են: Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 98.1%-ը, իսկ վճարովի՝ 1.9%-ը: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 7.4% (կանանց՝ 4.0%, տղամարդկանց՝ 10.4%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 0.38:

Ուսումնական հաստատություններ ընդունվածների թվաքանակն անվճար և վճարովի ուսուցման համակարգերում ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014/2015 ու. տարի

մարդ

	Ընդունվածների թվաքանակը		այդ թվում՝			
	ընդամենը	նրանցից՝ կանայք	անվճար		վճարովի	
			ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
Երևան	1 137	312	1 097	303	40	9
Արագածոտն	210	103	210	103	-	-
Արարատ	60	6	60	6	-	-
Արմավիր	84	28	84	28	-	-
Գեղարքունիք	210	54	210	54	-	-
Լոռի	247	58	238	57	9	1
Կոտայք	375	144	375	144	-	-
Շիրակ	572	227	547	208	25	19
Սյունիք	182	85	182	85	-	-
Վայոց ձոր	41	24	41	24	-	-
Տավուշ	149	57	148	57	1	-
Ընդամենը ՀՀ	3 267	1 098	3 192	1 069	75	29

Ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակն անվճար և վճարովի ուսուցման համակարգերում ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014/2015 ու. տարի

	Հաստատությունների քանակը միավոր		Ուսանողների թվաքանակը, մարդ		այդ թվում՝			
	նախադասնագիտական (արհեստագործական)	միջին մասնագիտական	ընդամենը	նրանցից՝ կանայք	անվճար		վճարովի	
					ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	7	5	2 762	674	2 664	664	98	10
Արագածոտն	1	1	306	123	306	123	-	-
Արարատ	-	1	169	11	169	11	-	-
Արմավիր	1	-	232	86	228	86	4	-
Գեղարքունիք	1	2	519	82	519	82	-	-
Լոռի	2	2	574	101	561	100	13	1
Կոտայք	5	3	823	190	823	190	-	-
Շիրակ	5	-	1 106	353	1 081	334	25	19
Սյունիք	1	3	355	107	355	107	-	-
Վայոց ձոր	-	1	107	31	107	31	-	-
Տավուշ	1	2	342	81	341	81	1	-
Ընդամենը ՀՀ	24	20	7 295	1 839	7 154	1 809	141	30

Ուսումնական հաստատությունների շրջանավարտների թվաքանակն անվճար և վճարովի ուսուցման համակարգերում ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ.

մարդ

	Շրջանավարտների թվաքանակը		այդ թվում՝			
	ընդամենը	նրանցից՝ կանայք	անվճար		վճարովի	
			ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	805	215	777	208	28	7
Արագածոտն	108	47	108	47	-	-
Արարատ	51	-	51	-	-	-
Արմավիր	18	18	18	18	-	-
Գեղարքունիք	147	29	147	29	-	-
Լոռի	186	33	178	33	8	-
Կոտայք	284	136	284	136	-	-
Շիրակ	338	140	313	121	25	19
Սյունիք	119	77	117	76	2	1
Վայոց ձոր	33	17	33	17	-	-
Տավուշ	155	55	155	55	-	-
Ընդամենը ՀՀ	2 244	767	2 181	740	63	27

Միջին մասնագիտական կրթություն

Հանրապետության 99 միջին մասնագիտական պետական և ոչ պետական ուսումնական հաստատություն (ՄՄՈւՀ) 2014/2015 ուսումնական տարում ընդունվել է 8 470 (կանայք՝ 56.2%), սովորել՝ 28 483 (կանայք՝ 54.5%), ավարտել՝ 7 578 (կանայք՝ 56.7%) մարդ: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 12.2% (կանանց՝ 13.9%, տղամարդկանց՝ 10.7%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 1.29:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակի շարժն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014/2015 ուս. տարի

	ՄՄՈՒՀ-ների քանակը, միավոր	Ընդունվել են, մարդ		Ուսանողների թվաքանակը, մարդ		Ավարտել են 2014թ., մարդ	
		ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	37	4 344	2 501	16 189	9 161	4 540	2 661
Արագածոտն	1	91	51	189	84	75	36
Արարատ	4	511	286	1 383	649	454	250
Արմավիր	5	335	182	1 120	607	266	165
Գեղարքունիք	9	491	285	1 487	785	252	130
Լոռի	9	614	366	1 958	1 182	360	170
Կոտայք	6	433	206	1 328	575	300	114
Շիրակ	12	709	402	2 389	1 256	751	431
Սյունիք	7	523	274	1 329	680	283	197
Վայոց ձոր	3	93	53	280	172	53	28
Տավուշ	6	326	152	831	364	244	113
Ընդամենը ՀՀ	99	8 470	4 758	28 483	15 515	7 578	4 295

Բարձրագույն մասնագիտական կրթություն

Բարձրագույն կրթության առաջին աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների գործունեություն:

2014/2015 ուսումնական տարում հանրապետության 62 բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ (ԲՈւՀ) և 12 մասնաճյուղեր բարձրագույն կրթության առաջին աստիճանում իրականացրել են մասնագիտական կրթություն բակալավրի ծրագրերով: Այդ հաստատություններ ընդունվել է 17 473 (կանայք՝ 51.5%), սովորել՝ 79 623 (կանայք՝ 52.2%), ավարտել՝ 19 702 (կանայք՝ 59.7%) մարդ: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 46.8% (կանանց՝ 49.4%, տղամարդկանց՝ 44.2%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 1.12:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակի շարժն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014/2015 ուս. Տարի

	ԲՈւՀ-երի քանակը, միավոր	Մասնաճյուղերի քանակը, միավոր	Ընդունվել են, մարդ		Ուսանողների թվաքանակը, մարդ		Ավարտել են 2014թ., մարդ	
			ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	51	-	14 979	7 609	68 178	35 255	16 592	10 015
Արմավիր	2	-	64	15	249	51	79	16
Գեղարքունիք	2	-	309	171	1 482	779	420	261
Լոռի	2	2	581	370	3 341	1 970	900	594
Կոտայք	1	-	23	17	217	125	65	43
Շիրակ	2	5	685	390	2 739	1 636	789	359
Սյունիք	2	2	394	194	1 720	807	441	214
Վայոց ձոր	-	1	47	33	158	99	14	9
Տավուշ	-	2	391	202	1 539	857	402	252
Ընդամենը ՀՀ	62	12	17 473	9 001	79 623	41 579	19 702	11 763

Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեություն:

2014/2015 ուս. տարում հանրապետության 33 բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ (ԲՈՒՀ) ու 9 մասնաճյուղեր և 3 գիտական կազմակերպություններ բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում իրականացրել են մասնագիտական կրթություն մագիստրոսի ծրագրերով: Այդ կազմակերպություններ ընդունվել է 7 373 (կանայք՝ 63.8%), սովորել՝ 14 476 (կանայք՝ 65.8%), ավարտել՝ 7 522 (կանայք՝ 67.3%) մարդ: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 13.5% (կանանց՝ 17.3%, տղամարդկանց՝ 9.5%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 1.81:


Բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ու գիտական կազմակերպությունների ուսանողների թվաքանակի շարժն ըստ ուսուցման ձևի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014/2015 ուս. Տարի

	ԲՈւՀ-երի քանակը միավոր	Մասնաճյուղերի քանակը միավոր	Գիտական կազմակերպությունների քանակը, միավոր	Ընդունվել են, մարդ		Ուսանողների թվաքանակը, մարդ		Ավարտել են 2014թ. մարդ	
				ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
Երևան	28	-	3	6 584	4 153	12 968	8 461	6 781	4 501
Արմավիր	1	-	-	20	-	46	-	32	-
Գեղարքունիք	1	-	-	98	69	205	132	80	50
Լոռի	2	1	-	218	143	432	297	191	155
Շիրակ	1	5	-	339	264	615	486	329	277
Սյունիք	-	1	-	84	58	151	111	72	55
Վայոց ձոր	-	1	-	30	20	55	31	28	17
Տավուշ	-	1	-	-	-	4	4	9	7
Ընդամենը ՀՀ	33	9	3	7 373	4 707	14 476	9 522	7 522	5 062

8.1. Ընդգրկվածությունը կրթության համակարգում

Հանրակրթական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածությունն ըստ կրթական ծրագրերի 2014/2015 ուսումնական տարում ներկայացված է Գծապատկեր 8.1-ում¹:

Գծապատկեր 8.1. Հայաստան. Հանրակրթական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածությունն ըստ կրթական ծրագրերի, 2014/2015 ուսումնական տարում (տոկոսներով)



Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ 2014թ.

Ըստ վարչական վիճակագրության տվյալների՝ 2014թ.-ին հանրապետությունում նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածությունը (0-5 տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 28.7%, քաղաքային բնակավայրերում՝ 36.0%, իսկ գյուղականում՝ 16.6%: Իսկ 2014թ.-ին հանրապետությունում 3-5 տարեկանների նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածությունը կազմել է 50.9%:

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ նախադպրոցական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը (մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 27% և տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: Ոչ աղքատ տնային տնտեսություններում այն կազմել է 29%, աղքատ տնային տնտեսություններում (առանց ծայրահեղ աղքատների)՝ 24%, ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում՝ 19%: Նախադպրոցական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը (մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակից) տարբերվում է ըստ սպառման ազդեցատի քվինտիլային խմբերի: Առաջին քվինտիլային խմբում այն կազմել է 21%, երկրորդում՝ 27%, երրորդում՝ 29%, չորրորդում՝ 23%, հինգերորդում՝ 38%:


¹ Կրթության համակարգում ընդգրկվածության աստիճանը բերված է ըստ վարչական ռեգիստրների կողմից տրամադրված տեղեկատվության և կարող է տարբերվել ՏՏԿԱՀ տվյալներից:

Տնային տնտեսությունների կողմից ուսման համար կատարված վճարները

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, 2014թ.-ին ուսման համար կատարված վճարները տնային տնտեսությունների ընդհանուր, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների համար կատարված ծախսերում կազմել են 1.0% (Աղյուսակ A6.1, Գծապատկեր 8.2):

Գծապատկեր 8.2 Հայաստան. Ուսման համար կատարվող վճարների մասնաբաժինը տնային տնտեսությունների ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների համար կատարվող ընդհանուր ծախսերում, 2014թ.

(տոկոսներով)



Աղբյուրը. *SSYUՀ 2014թ.*

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, 2014թ.-ին, ընդհանուր առմամբ, մինչև 6 տարեկան 10 երեխայից ավելի քան 7-ը չի հաճախել նախադպրոցական հաստատություն: Պատասխաններից երևում է, որ որպես հիմնական պատճառներ նշել են, որ երեխայի մայրը չի աշխատում՝ 59.4%, մանկապարտեզ չկա՝ 6.4%, դրանից օգտվելը թանկ է՝ 2.1% կամ նախադպրոցական հաստատությունը փակ է՝ 2.4% (Աղյուսակ 8.1):

Աղյուսակ 8.1. Հայաստան. Նախադպրոցական հաստատություն չհաճախելու պատճառները, 2014թ.

(տոկոսներով)

	Քվինտիլներ					Ընդամենը
	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	
Շատ թանկ է	5.9	1.7	0.3	-	0.7	2.1
Վատ են կերակրում	0.4	-	-	-	-	0.1
Աշխատանքի ժամերը հարմար չեն	-	-	-	-	1.2	0.2
Վարակիչ հիվանդությունների վտանգ կա	0.5	-	1.4	1.2	3.2	1.1
Նախադպրոցական հաստատությունը փակ է	2.6	1.3	2.6	1.9	3.9	2.4

	Քվինտիլներ					Ընդամենը
	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	
Ծառայության որակը ցածր է	-	1.6	-	1.0	0.7	0.6
Մայրը չի աշխատում	62.5	62.0	60.4	52.1	58.2	59.4
Մանկապարտեզ չկա	10.1	7.5	3.8	7.0	-	6.4
Արդեն դպրոց է գնում	1.0	2.0	0.1	-	3.2	1.1
Այլ	17.0	23.9	31.4	36.8	28.9	26.6
Ընդամենը	100	100	100	100	100	100

Աղբյուրը. SSYUՀ 2014թ.

Ամենաաղքատ և ամենահարուստ քվինտիլային խմբերի միջև առկա է տարբերություն: Ամենաաղքատ 1-ին քվինտիլի հարցվողների 5.9%-ը նշել է, որ նախադպրոցական կրթությունը շատ թանկ է, այն ժամանակ, երբ ամենահարուստ քվինտիլի հարցվողների 0.7%-ն է նշել այդ նույն պատճառը (Աղյուսակ 8.1):

Մատչելիության կարևոր ցուցանիշներից է ամենամոտ նախադպրոցական հաստատության հեռավորությունը տնային տնտեսությունից: Ըստ 2014թ.-ի հետազոտության տվյալների, գյուղաբնակ տնային տնտեսությունների 46%-ը պատասխանել է, որ նախադպրոցական հաստատությունը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա (ամենաաղքատ և ամենահարուստ քվինտիլների համապատասխանաբար՝ 45% և 46%-ը): Մինևույն ժամանակ տնային տնտեսությունների 12%-ը պատասխանել է, որ այն գտնվում է 10 կմ-ից հեռու: Ամենահարուստների 5%-ը և ամենաաղքատների 11%-ը պատասխանել է, որ մոտակա նախադպրոցական հաստատությունը գտնվում է ավելի քան 10 կմ հեռավորության վրա: Ըստ քվինտիլային խմբերի, տվյալները բերված են Աղյուսակ 8.2-ում:

Աղյուսակ 8.2. Հայաստան. Նախադպրոցական հաստատությունների մատչելիությունը գյուղական բնակավայրերում, 2014թ.

(տոկոսներով)

Գյուղական վայրեր	Քվինտիլներ					Ընդամենը
	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	
Ամենամոտ նախադպրոցական հաստատության հեռավորությունը						
0-1 կմ	45.3	43.2	46.5	46.4	45.6	45.5
1-3 կմ	17.9	25.8	19.7	27.1	35.8	25.3
4-5 կմ	4.2	5.1	3.8	4.0	4.1	4.2
6-10 կմ	21.7	10.5	14.6	11.2	10.0	13.4
>10 կմ	10.9	15.4	15.4	11.3	4.5	11.6
Ընդամենը	100	100	100	100	100	100
Երթևեկության միջոցը նախադպրոցական հաստատություն հասնելու համար						
Մեքենա	4.7	16.0	18.2	11.4	12.5	12.8
Ավտոբուս	36.9	25.1	25.2	22.8	17.1	25.0
Տաքսի	1.0	0.8	0.7	0.4	-	0.6
Ոտքով	57.4	58.1	55.9	65.4	70.4	61.6
Ընդամենը	100	100	100	100	100	100

Աղբյուրը. SSYUՀ 2014թ.

Տարրական (1-4) դասարաններ

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ տարրական (1-4) դասարաններում համախառն ընդգրկվածությունը 2014թ.-ին կազմել է 96% և շատ չի տարբերվում ըստ աղքատության մակարդակի: Տարրական դպրոցներում համախառն ընդգրկվածությունը ոչ աղքատ տնային տնտեսությունների համար կազմել է 95% , աղքատ տնային տնտեսությունների (առանց ծայրահեղ աղքատների) և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համար՝ 97%: Ամենաաղքատ առաջին քվինտիլում, ինչպես և երրորդում համախառն ընդգրկվածությունը կազմել է 96%, իսկ երկրորդ, չորրորդ, հինգերորդ քվինտիլներում համապատասխանաբար՝ 98%, 95% և 94%:

Տարրական դպրոցներում սովորող երեխա ունեցող տնային տնտեսությունների միջին ամսական ծախսը մեկ աշակերտի հաշվով կազմել է 2 387 դրամ, որից դասագրքերի վրա՝ 40%, այլ ծախսերի վրա՝ 49%, վարձավճարի համար՝ 2%, մասնավոր դասերի համար՝ 9%: Եթե տարրական դպրոցներում սովորող երեխա ունեցող տնային տնտեսությունների միջին ամսական ծախսը մեկ աշակերտի հաշվով կազմել է 2 387 դրամ, ապա ոչ աղքատներինը՝ 2 692 դրամ, աղքատներինը (առանց ծայրահեղ աղքատների)՝ 1 874 դրամ և ծայրահեղ աղքատներինը՝ 1 558 դրամ:

Հիմնական (5-9) դասարաններ

Ինչ վերաբերում է հիմնական դասարանների (5-9) համախառն ընդգրկվածությանը, ապա ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ հիմնական դասարանների (5-9) համախառն ընդգրկվածությունը 2014թ.-ին կազմել է 93%: Հիմնական դպրոցներում ընդգրկվածությունը ոչ աղքատ տնային տնտեսությունների համար կազմել է 94%, աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) տնային տնտեսությունների համար՝ 90% և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համար՝ 92%: Հիմնական դասարաններում համախառն ընդգրկվածությունը ամենաաղքատ քվինտիլում կազմել է 90%, երկրորդում՝ 91%, երրորդում՝ 93%, իսկ չորրորդում և հինգերորդում՝ 95%:

Այն տնային տնտեսությունները, որոնք 2014թ.-ին ունեին հիմնական դպրոցում սովորող աշակերտ, միջինում ծախսել են մեկ աշակերտի հաշվով ամսական 3 119 դրամ, որից՝ դասագրքերի և գրենական պիտույքների վրա՝ 39%, վարձավճարի վրա՝ 1%, մասնավոր դասերի՝ 19%, իսկ կրթության այլ ծախսերի վրա՝ 41%: Եթե հիմնական դպրոցում սովորող աշակերտ ունեցող տնային տնտեսությունը մեկ աշակերտի հաշվով միջինում ծախսել է ամսական 3 119 դրամ, ապա ոչ աղքատները՝ 3 504 դրամ, աղքատները (առանց ծայրահեղ աղքատների)՝ 2 361 դրամ և ծայրահեղ աղքատները՝ 1 319 դրամ:

Հիմնական կրթությունը պարտադիր է Հայաստանում: Հիմնական կրթությունը ստանալուց հետո կրթական համակարգից համապատասխան տարիքի երեխաների մի մասը դուրս է մնում: Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, ընդհանուր առմամբ, 2014թ.-ի ընթացքում 15-17 տարեկան երեխաների 14.2%-ը որևէ ուսումնական հաստատություն չի հաճախել: Նրանց գերակշիռ մասը՝ 89.5%-ը, պատճառաբանել է, որ ավարտել է դպրոցը կամ կրթությունը, 1%-ը չի

ցանկացել այլևս սովորել, 0.3%-ը դպրոց չի հաճախել առողջական խնդիրների պատճառով, իսկ 1.5%-ի համար կրթական ծառայությունները շատ թանկ են, և, դրանով պայմանավորված, նրանք թողել են ուսումը: Մնացածը չեն հաճախել դպրոց այլ պատճառներով:

Քանի որ պարտադիր կրթությունը Հայաստանում անվճար է, ուսումնական ծախսերը տարրական և հիմնական կրթության մակարդակներում սովորողներ ունեցող տնային տնտեսությունների համար այդքան էլ խնդիր չեն: Այդուհանդերձ, նույնիսկ այդ ուսումնական ծախսերը բեռ են տնային տնտեսությունների համար:

Տնային տնտեսությունների համար ավելի ծանր բեռ է, հատկապես բարձր դասարաններում սովորող երեխաներ ունենալը:

Ավագ դպրոց

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ ավագ դպրոցներում ընդգրկվածությունը (15-17 տարիքային խումբ) կազմել է 72%: Ավագ դպրոցներում համախառն ընդգրկվածությունը ոչ աղքատ տնային տնտեսությունների համար կազմել է 77% , աղքատ տնային տնտեսությունների (առանց ծայրահեղ աղքատների) համար՝ 63%, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համար՝ 61%:

Ավագ դասարաններում սովորող երեխա ունեցող տնային տնտեսություններում միջին ամսական ծախսը մեկ աշակերտի հաշվով կազմել է 6 232 դրամ, որից դասագրքերի վրա՝ 21%, այլ ծախսերի վրա՝ 25%, մասնավոր դասերի վրա՝ 47% և վարձավճարի վրա՝ 7%: Ավագ դասարաններում սովորող երեխա ունեցող տնային տնտեսություններում միջին ամսական ծախսը մեկ աշակերտի հաշվով, ըստ աղքատության մակարդակի կազմել է՝ ոչ աղքատների համար 7 522 դրամ, որից դասագրքերի վրա՝ 18%, այլ ծախսերի վրա՝ 22%, մասնավոր դասերի վրա՝ 52% և վարձավճարի վրա՝ 8%, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների) համար համապատասխանաբար՝ 3 427 դրամ, որից դասագրքերի վրա՝ 34%, այլ ծախսերի վրա՝ 37%, մասնավոր դասերի վրա՝ 24% և վարձավճարի վրա՝ 5%, ծայրահեղ աղքատների համար՝ 1756 դրամ, որից դասագրքերի վրա՝ 40%, այլ ծախսերի վրա՝ 44%, մասնավոր դասերի վրա՝ 16%, վարձավճարի վրա ծախս չեն ունեցել:

Բարձրագույն կրթական հաստատություններ


Ի տարբերություն հիմնական կրթության, միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում և բարձրագույն կրթական հաստատություններում սովորողների ընդգրկվածությունը համեմատաբար ավելի ցածր է, իսկ աղքատների և ոչ աղքատների ընդգրկվածության տարբերությունը՝ բավականին ակնհայտ: Բարձրագույն կրթության հետ կապված մեծ ծախսերը, և հատկապես, դրանց մատչելիությունը, կրթություն ստանալուց հետո բարձր աշխատավարձ ստանալու ցածր հավանականությունը, այն հիմնական պատճառներն են, որով կարելի է բացատրել հիմնական և, մասնավորապես, ընդհանուր միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության կրթական համակարգից դուրս մնալը:

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ բարձրագույն կրթական հաստատություններում ընդգրկվածությունը (18-22 տարիքային խումբ) կազմել է 43%: Բարձրագույն կրթական հաստատություններում ոչ աղքատ տնային տնտեսությունների ընդգրկվածությունը կազմել է 47%, աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) տնային տնտեսություններինը՝ 34% և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններինը՝ 26%: Բարձրագույն կրթական հաստատություններում համախառն ընդգրկվածությունն ամենաաղքատ քվինտիլում կազմել է 35%, երկրորդում՝ 37%, երրորդում՝ 42%, չորրորդում՝ 39% և հինգերորդում՝ 60%:

Բարձրագույն կրթական հաստատություններում սովորող երեխա ունեցող տնային տնտեսություններում միջին ամսական ծախսը մեկ սովորողի հաշվով կազմել է 31 386 դրամ, որից վարձավճարի վրա՝ 86%, դասագրքերի վրա՝ 6%, այլ ծախսերի վրա՝ 7%, մասնավոր դասերի վրա՝ 1%:

Գծապատկեր 8.3-ում ներկայացված է բնակչության ընդհանուր սպառման մեջ կրթության ոլորտի ծառայությունների սպառման մասնաբաժինն ըստ քվինտիլային խմբերի: Համաձայն հավելվածում (Աղյուսակ A3.9, Հավելված 2) ներկայացված տվյալների՝ ամենաաղքատ քվինտիլի բնակչության ծախսը կրթության ոլորտի ծառայությունների վրա 7 անգամ զիջում է միջին մակարդակին, իսկ հինգերորդ քվինտիլի բնակչության սպառումը 4 անգամ գերազանցում է միջին մակարդակը:

Գծապատկեր 8.3: Կրթության վրա ծախսերի մասնաբաժինը բնակչության ընդհանուր սպառման նկատմամբ, ըստ քվինտիլային խմբերի, 2014թ.



Աղբյուրը. SSYUՀ 2014թ.

Տնային տնտեսությունների անդամների 7.6%-ը պատասխանել է, որ ընթացիկ և նախորդ ուսումնական տարիների ընթացքում իրենց խնդրել են, որ նվեր տան ուսուցչին կամ դասախոսին: Իսկ տնային տնտեսությունների 12.3%-ը պատասխանել է, որ ընթացիկ և նախորդ ուսումնական տարիների ընթացքում սեփական նախաձեռնությամբ կամ ուրիշի խնդրանքով է նվեր տվել ուսուցչին կամ դասախոսին:

Կրթության մատչելիության ամենակարևոր ցուցանիշներից է ամենամոտ դպրոցական հաստատության (միջնակարգ դպրոցի) հեռավորությունը տնային տնտեսությունից: Ըստ 2014թ.-ի հետազոտության տվյալների, գյուղաբնակ տնային տնտեսությունների 72%-ը պատասխանել է, որ միջնակարգ դպրոցը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա: Միննույն ժամանակ տնային տնտեսությունների 1.6%-ը պատասխանել է, որ այն գտնվում է 4 և ավելի կմ հեռու, այդ թվում 0.2%-ը պատասխանել է, որ մոտակա միջնակարգ դպրոցը գտնվում է ավելի քան 10 կմ հեռավորության վրա: Տվյալներն ըստ քվինտիլային խմբերի, բերված են Աղյուսակ 8.3-ում:

Աղյուսակ 8.3. Հայաստան. Գյուղական բնակավայրեր. Ամենամոտ դպրոցական հաստատության (միջնակարգ դպրոցի) հեռավորությունը և այնտեղ հասնելու երթևեկության միջոցը, 2014թ.

(տոկոսներով)

Գյուղական վայրեր	Քվինտիլներ					Ընդամենը
	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	
<i>Ամենամոտ միջնակարգ դպրոցի հեռավորությունը</i>						
0-1 կմ	77.6	72.3	76.9	68.3	64.8	71.9
1-3 կմ	21.4	25.9	20.7	29.6	34.3	26.5
4-5 կմ	0.3	0.8	0.9	0.2	-	0.4
6-10 կմ	0.3	0.7	1.2	1.7	0.8	1.0
>10 կմ	0.4	0.3	0.3	0.2	0.1	0.2
Ընդամենը	100	100	100	100	100	100
<i>Երթևեկության միջոցը դպրոցական հաստատություն հասնելու համար</i>						
Մեքենա	3.4	6.6	6.3	4.4	5.3	5.2
Ավտոբուս	2.0	2.6	4.8	3.5	3.4	3.4
Տաքսի	0.1	-	-	0.1	-	0.0
Ոտքով	94.5	90.8	88.9	92.0	91.3	91.4
Ընդամենը	100	100	100	100	100	100

Աղբյուրը. SSYUՀ 2014թ.

16-20 տարեկան ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների կարծիքով, կրթությունը չշարունակելու հիմնական պատճառը հանդիսանում է միջնակարգ դպրոցի ավարտը (համապատասխանաբար՝ 63% և 58%): Միննույն ժամանակ տղաների 5.1%-ը, իսկ աղջիկների 5.0%-ը նշել է, որ կրթությունը թանկ է: Ըստ քվինտիլային խմբերի տվյալները բերված են Աղյուսակ 8.4-ում:

Աղյուսակ 8.4. Հայաստան. 16-20 տարեկան անձանց կրթությունը չշարունակելու պատճառներն ըստ սեռի, 2014թ.

(տոկոսներով)

	Քվինտիլներ					Ընդամենը
	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	
Տղաներ						
Հիվանդությունը	-	0.7	-	-	-	0.1
Ստիպված է աշխատել	-	0.4	-	-	-	0.1
Տրանսպորտային դժվարություններ	-	-	-	-	-	-
Թանկ է	0.7	6.7	10.3	6.9	-	5.1
Չեմ ուզում սովորել	2.4	2.6	-	0.4	-	1.2
Ժամանակավորապես չեմ հաճախում, բայց կշարունակեմ	1.4	-	2.8	-	-	0.9
Ընտանեկան պատճառներ	-	-	-	-	-	-
Ավարտել եմ հիմնական դպրոցը (9-րդ դաս.)	14.3	20.3	18.5	8.1	11.2	14.9
Ավարտել եմ միջնակարգ դպրոցը (12-րդ դաս.)	77.7	54.7	55.3	64.4	58.0	62.7
Ավարտել եմ կրթությունս	3.5	14.6	13.1	17.2	30.8	14.3
Այլ	-	-	-	3.0	-	0.7
Ընդամենը	100	100	100	100	100	100
Աղջիկներ						
Հիվանդությունը	-	-	-	-	-	-
Ստիպված է աշխատել	-	-	-	-	-	-
Տրանսպորտային դժվարություններ	-	-	-	-	-	-
Թանկ է	3.2	11.6	3.3	4.7	-	5.0
Չի ցանկանում սովորել	-	-	-	-	-	-
Ժամանակավորապես չեմ հաճախում, բայց կշարունակեմ	1.9	2.0	-	-	4.7	1.8
Ընտանեկան պատճառներ	-	-	-	-	-	-
Ավարտել եմ հիմնական դպրոցը (9-րդ դաս.)	17.1	3.2	13.4	-	5.6	8.7
Ավարտել եմ միջնակարգ դպրոցը (12-րդ դաս.)	57.9	75.0	60.8	68.3	21.3	57.9
Ավարտել եմ կրթությունս	18.1	8.2	20.0	27.0	62.1	24.6
Այլ	1.8	-	2.5	-	6.3	2.0
Ընդամենը	100	100	100	100	100	100

Աղբյուրը. *SSYULZ 2014թ.*

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների 79%-ը ոչ աղքատ տնային տնտեսություններից են, 20%-ը՝ աղքատ, (առանց ծայրահեղ աղքատների) և մոտ 1%-ը՝ ծայրահեղ աղքատ:

**8.2. Դասընթացներ կրթական հաստատություններ չհաճախող անձանց համար
(14 և բարձր տարեկանների համար)**

2014թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության տվյալները վկայում են, որ 14 և բարձր տարիքի կրթական հաստատություններ չհաճախող անձանցից միայն 0.6%-ը հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում հաճախել են որևէ դասընթացի: Դասընթացներն ըստ տևողության բաշխվել են հետևյալ կերպ. 1 ամսից ավել՝ 32.4%, մինչև 2 շաբաթ՝ 45.5%, 2 շաբաթից մինչև 1 ամիս՝ 11.2%, 1 ամիս՝ 10.9%: Դասընթացների համար վճարել է հիմնականում պետությունը/համայնքը՝ 48.0%: Դասընթացների հիմնական նպատակը որակավորման բարձրացումն է՝ 38.9%, ուսուցումը՝ 22.7%, վերաորակավորումը՝ 38.4%: Ավելի հաճախ բնակչությունը հաճախել է դասընթացների ըստ հետևյալ առարկաների. օտար լեզու՝ 15.0%, հաշվապահական հաշվառում՝ 10.9%, համակարգիչ՝ 9.5%, արհեստ՝ 3.9%: Տնային տնտեսության միջին ծախսը ամսական մեկ դասընթացի հաշվով կազմել է ավելի քան 34 հազար, իսկ առավելագույն վճարը՝ 400 հազար դրամ:

Գլուխ 9. Սոցիալական տրանսֆերտները Հայաստանում և դրանց ներգործությունն աղքատության կրճատման գործում

9.1 Սոցիալական տրանսֆերտների համակարգը Հայաստանում

Սոցիալական տրանսֆերտները ներառում են կենսաթոշակները և դրամական սոցիալական աջակցությունը: Կենսաթոշակները եկամտի կարևոր աղբյուր են բնակչության համար, հատկապես կենսաթոշակառուների համար այն շատ դեպքերում եկամտի միակ աղբյուրն է, ուստի կենսաթոշակի չափը պայմանավորում է այդ խմբի բնակչության բարեկեցության աստիճանը (Հավելված 4-ի Աղյուսակ A9.1-ը ներկայացնում է Հայաստանում կենսաթոշակառուների թվաքանակն ըստ կենսաթոշակի տեսակների): Իսկ դրամական սոցիալական աջակցության ոլորտում Հայաստանի Հանրապետությունում գործող ամենամեծ ծրագիրն ընտանեկան նպաստի ծրագիրն է: Այն ամենամեծն է բնակչության ընդգրկվածության, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեում այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների առումով:

9.2 Աղքատության մակարդակի կրճատման վրա սոցիալական տրանսֆերտների ազդեցության գնահատումը

Թեև սոցիալական տրանսֆերտներին ուղղված համախմբված բյուջեի ծախսերը տարեց տարի ավելանում են, դրանք շարունակում են ՀՆԱ-ի նկատմամբ մնալ բավական սահմանափակ մակարդակում (2014թ` 7.2%): Այդուհանդերձ սոցիալական տրանսֆերտները զգալիորեն նպաստում են աղքատության մակարդակի կրճատմանը: Ամբողջ բնակչության հաշվով, եթե դադարեցվի սոցիալական տրանսֆերտների վճարումը, իսկ տնային տնտեսությունները, բավարար ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված, չկարողանան փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության մակարդակը զգալիորեն կաճի, աղքատության ընդհանուր մակարդակը կավելանա 12.7 տոկոսային կետով կամ 42%-ով (30.0%-ից` 42.7%), աղքատությունը նաև էապես կխորանա և կսրվի: Իրավիճակն ավելի կսրվի հատկապես սոցիալական տրանսֆերտներ ստացող բնակչության համար:

Կենսաթոշակները, որպես սոցիալական տրանսֆերտների առավել մեծ բաղադրիչ, առավել մեծ ներգործություն ունեն աղքատության հաղթահարման գործում, քան դրամական սոցիալական աջակցությունը: Մակայն փոքր չէ նաև դրամական սոցիալական աջակցության, մասնավորապես, ընտանեկան նպաստի դերը: Չնայած ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկվածությունը սահմանափակ է, այն բարձր հասցեականություն ունի, քանզի բոլոր նպաստառուների 74.1%-ը, որոնք ստանում են ծրագրին հատկացված ֆինանսական միջոցների 75.9%-ը, գտնվում են սպառման բաշխվածության ամենաստորին երկու քվինտիլներում: Թեև ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկվածությունը լավ արդյունք ունի, այդուհանդերձ, ծրագրի հասցեականության բարելավման անհրաժեշտությունը դեռ առկա է, քանզի ամենաաղքատ 20% բնակչության 49%-ը դուրս է մնում դրամական աջակցության ծրագրերից:

Մեթոդաբանությունը

Սոցիալական պաշտպանության ծրագրերի ներգործությունը երկրում աղքատության մակարդակի փոփոխության վրա գնահատվում է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության միջոցով: Վերլուծությունը ներառում է սոցիալական պաշտպանության երկու հիմնական ծրագրեր՝ կենսաթոշակները և պետական դրամական աջակցությունը, որտեղ ներառվել են բոլոր տեսակի սոցիալական դրամական աջակցությունները: Բացառությամբ ընտանեկան նպաստի (ԸՆ), բոլոր այլ տեսակի պետական նպաստները հատկացվում են բնակչության շատ նեղ խմբերի, որի արդյունքում նման նպաստառուները շատ փոքր մաս են կազմում ՏՏԿԱՀ-ում և չեն բավարարում վիճակագրականորեն նշանակալի եզրահանգումներ կատարելու համար:

Սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակների և պետական դրամական աջակցության) ներգործությունն աղքատության մակարդակի վրա գնահատելու համար կիրառվել է հետևյալ մոտեցումը. հետազոտությամբ դիտարկված աղքատության մակարդակի արդյունքները («հետտրանսֆերտային մակարդակ») համեմատվել են այն արդյունքների հետ, որոնք կստացվեին, եթե այդ տրանսֆերտները չվճարվեին («նախատրանսֆերտային մակարդակ»): Գնահատման մեթոդաբանությունն այսպիսին է. տնային տնտեսությունների համար հաշվարկվել է «նախատրանսֆերտային» սպառման ագրեգատը՝ տնային տնտեսությունների համար հաշվարկված ընդհանուր սպառման ագրեգատից հանելով սոցիալական տրանսֆերտների գումարը (կենսաթոշակների գումարը, դրամական սոցիալական աջակցության գումարը, կամ երկուսը միասին), ելնելով այն ենթավարկածից, որ սոցիալական տրանսֆերտների ամբողջ գումարը սպառվում է տնային տնտեսության կողմից (իրավիճակ, որը շատ բնորոշ է Հայաստանի նման զարգացող երկրներին): Այդպիսով, «նախատրանսֆերտային» և «հետտրանսֆերտային» աղքատության մակարդակների տարբերությունն իրենից ներկայացնում է աղքատության մակարդակի փոփոխության վրա սոցիալական տրանսֆերտների ներգործության գնահատականը: Այս մեթոդաբանությունը հատկապես կարևորվում է սոցիալական աջակցության հասցեականության բարելավման տեսանկյունից: Սոցիալական աջակցության համար նպատակային բնակչությունը «նախատրանսֆերտային» աղքատներն են, քանզի սոցիալական աջակցություն ստանալուց հետո աղքատ բնակչության մի որոշ խումբ անցնում է աղքատության շեմը, ուստի «հետտրանսֆերտային» բնակչությունը, որպես նպատակային խմբի դիտարկում, կարող է իր մեջ բավական մեծ անճշտություն պարունակել:

Կենսաթոշակների ներգործությունն աղքատության մակարդակի վրա գնահատվել է՝ համեմատելով «նախատրանսֆերտային» աղքատության մակարդակը կենսաթոշակները ստանալուց հետո աղքատության մակարդակի հետ, այսինքն՝ «հետկենսաթոշակային», բայց առանց «նախասոցիալական աջակցության», աղքատության մակարդակի հետ¹:

¹ Հետազոտությամբ ստացված արդյունքները որոշակի վիճակագրական սխալով (շեղմամբ) են ներկայացնում ՀՀ բնակչության պատկերը: Նման վիճակագրական սխալ պարունակում են նաև նախատրանսֆերտային և հետտրանսֆերտային աղքատության մակարդակները: Սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մակարդակի վրա ունի վիճակագրական նշանակություն, եթե նախատրանսֆերտային և հետտրանսֆերտային աղքատության միջին մակարդակների վստահության միջակայքերը չեն համընկնում:

9.3. Ինչպիսի՞ն է Հայաստանում սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մակարդակի վրա:

Սոցիալական նպաստների և կենսաթոշակների համար ՀՀ պետական բյուջեից Հայաստանում 2014թ.-ին հատկացվել է 347.7 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 7.2%-ը (2008թ.-ի՝ 207.9 մլրդ. դրամի կամ ՀՆԱ-ի 5.8 %-ի, 2009թ.-ի՝ 240.2 կամ 7.6%-ի , 2010թ.-ի՝ 244.0 կամ 7.1%-ի, 2011թ.-ի՝ 256.4 կամ 6.8%-ի, 2012թ.-ի 288.5 մլրդ. դրամ կամ 6.8%-ի և 2013թ. 294.9 մլրդ. դրամ կամ 6.5%-ի համեմատ): Ամենամեծ սոցիալական տրանսֆերտները կենսաթոշակներն են, որոնք ներառում են տարիքային, զինվորական և սոցիալական կենսաթոշակները:

2014թ.-ին սոցիալական տրանսֆերտները կազմել են Հայաստանի տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով ամսական ամբողջական եկամտի 15.8%-ը (16.5%՝ 2008թ.-ին և 2011թ.-ին՝ 17.5%, 2012թ.-ին՝ 17.1%, իսկ 2013թ.-ին՝ 16.6%) (Աղյուսակ 6.1): Ամենաստորին քվինտիլում սոցիալական տրանսֆերտները կազմել են տնային տնտեսությունների մեկ չափահաս անձի հաշվով միջին ամսական եկամտի 25.7%-ը, մինչդեռ սպառման վերին քվինտիլում գտնվող տնային տնտեսությունների համար դրանք կազմել են միայն 9.2% (Հավելված 2, Աղյուսակ A.3.10): Ըստ բնակավայրերի դիտարկելիս՝ սոցիալական տրանսֆերտները եկամտի կարևոր աղբյուր են եղել հիմնականում Երևանից դուրս քաղաքաբնակ տնային տնտեսությունների համար՝ 16.0%, իսկ երևանաբնակների, գյուղաբնակների համար սոցիալական տրանսֆերտները կազմել են միջին ամսական եկամտի 13.8 և 13.5%-ը:(Հավելված 2,Աղյուսակ A.3.10):

Ըստ ՏՏԿԱՀ արդյունքների, 2014թ.-ին ԸՆ-ը, որպես եկամտի աղբյուր, նշել է տնային տնտեսությունների 13.3%-ը, կենսաթոշակները՝ 55.2%-ը , երեխայի ծննդյան և խնամքի հետ կապված նպաստները՝ 1.3%-ը, և այլ նպաստները՝ ներառյալ արտոնությունները՝ 2.3%-ը (Աղյուսակ9.1):

Աղյուսակ 9.1. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտները որպես եկամտի աղբյուր նշածտնային տնտեսությունների մասնաբաժինը 2008-2014թթ .-ին

(տոկոսներով)

	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Կենսաթոշակ	50.5	51.9	52.5	53.3	53.9	53.7	55.2
Ընտանեկան նպաստ	15.3	12.2	13.4	10.2	13.5	12.2	13.3
Գործազրկության նպաստ	0.6	1.1	1.3	1.2	0.5	0.4	0.0
Երեխայի ծննդյան և խնամքի նպաստ	0.5	0.7	1.1	1.1	1.4	1.0	1.3
Այլ նպաստներ	3.7	4.2	3.1	3.2	2.6	1.6	2.3

Աղբյուրը. 2008-2014թթ., ՏՏԿԱՀ

2014թ.-ի հետազոտությամբ ստացված արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ թեև սոցիալական տրանսֆերտները ՀՆԱ-ի նկատմամբ փոքր գումար են կազմում, դրանք շարունակում են կարևոր գործիք լինել աղքատության հաղթահարմանն ուղղված քաղաքականության համար: Եթե դադարեցվի սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակներ և դրամական սոցիալական աջակցություն) վճարումը, իսկ աղքատ բնակչությունը չկարողանա այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակները զգալիորեն կաճեն (Աղյուսակ 9.2): Աղքատության մակարդակը 30.0%-ից կբարձրանա 42.7%-ի, աղքատներն ավելի

կաղքատանան, քանզի աղքատության խորությունը՝ աղքատության գծի նկատմամբ նրանց միջին սպառման պակասուրդը 4.5%-ից կկազմի 16.6%, իսկ աղքատությունն ավելի կսրվի՝ աղքատության սրության համաթիվը 1.3%-ից կհասնի 10.5%-ի: Նման անբարենպաստ ազդեցությունն առավել նկատելի կլինի ծայրահեղ աղքատ բնակչության համար: Եթե դադարեցվի սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակներ և դրամական սոցիալական աջակցություն) վճարումը, իսկ ծայրահեղ աղքատ բնակչությունը չկարողանա այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա ծայրահեղ աղքատության մակարդակը 2.3%-ից կբարձրանա 17.5%-ի, ծայրահեղ աղքատներն ավելի կաղքատանան, քանզի աղքատության խորությունը՝ ծայրահեղ աղքատության գծի նկատմամբ նրանց միջին սպառման պակասուրդը 0.3%-ից կկազմի 7.9%, իսկ ծայրահեղ աղքատությունն ավելի կսրվի՝ աղքատության սրությունը 0.1%-ից կհասնի 7.0%-ի:

Աղյուսակ 9.2. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մեղմացման վրա, 2014թ.

(տոկոսներով)

	Աղքատներ			Ծայրահեղ աղքատներ		
	Աղքատության մակարդակ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն	Աղքատության մակարդակ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
Հետտրանսֆերտային մակարդակ (հետ կ/թոշակային և հետ սոցիալական աջակցություն)	30.0	4.5	1.3	2.3	0.3	0.1
Նախատրանսֆերտային մակարդակ (նախակ/թոշակային և նախասոցիալական աջակցություն)	42.7	16.6	10.5	17.5	7.9	7.0
Նախքան կենսաթոշակների վճարումը (նախակ/թոշակային և հետսոցիալական աջակցություն)	41.4	14.6	8.7	14.7	6.2	5.4
Նախքան ընդամենը սոցիալական աջակցության վճարումը (նախա ԸՆ և այլ սոց. աջակցություն, հետ կ/թոշակային)	30.6	6.1	2.2	4.3	0.9	0.4
Նախքան ԸՆ վճարումը (նախա ԸՆ, հետկ/թոշակային և այլ սոց աջակցություն)	30.6	6.0	2.1	4.2	0.9	0.3

Աղբյուրը. *SSYULZ 2014թ.*

Կենսաթոշակները, որպես առավել մեծ սոցիալական տրանսֆերտներ, աղքատության հաղթահարման իմաստով ավելի զգալի դեր ունեն: Այդուհանդերձ, քիչ չէ սոցիալական աջակցության, մասնավորապես ընտանեկան նպաստի ներգործությունը: Օրինակ, եթե դադարեցվի միայն ընտանեկան նպաստի վճարումը, ապա ծայրահեղ աղքատությունը կաճի 1.9%-ային կետով (2.3%-ից՝ 4.2%-ի), իսկ աղքատության մակարդակը կավելանա 0.6%-ային կետով (30.0%-ից՝ 30.6%-ի). աղքատությունը կխորանա ու կսրվի, համապատասխանաբար՝ 1.5 և 0.8%-ային կետով, իսկ ծայրահեղ աղքատության

խորությունն ու սրությունը կավելանա 0.6 և 0.2%-ային կետով (Աղյուսակ 9.2): Այս ցուցանիշները վկայում են, որ ընտանեկան նպաստները հատկապես մեծ ազդեցություն ունեն ծայրահեղ աղքատության վրա: Աղքատության մակարդակի վրա սոցիալական տրանսֆերտների ներգործության դիտարկումը 2010-2014թթ.-ի ընթացքում ցույց է տալիս սոցիալական տրանսֆերտների կենսական կարևորությունը: 2010թ.-ին սոցիալական տրանսֆերտների չվճարման դեպքում աղքատությունը կավելանար 51.4%-ով կամ 18.4%-ային կետով, 2011թ.-ին՝ 52.0%-ով կամ 18.2%-ային կետով, 2012թ.-ին՝ 40.1%-ով կամ 13.0%-ային կետով, 2013թ.-ին՝ 43.4%-ով կամ 13.9%-ային կետով, իսկ 2014թ.-ին՝ 42.3%-ով կամ 12.7%-ային կետով (Աղյուսակ 9.3): Նշանակալի է ընտանեկան նպաստի կարևորությունը ծայրահեղ աղքատ ընտանիքների համար. եթե ընտանեկան նպաստը չվճարվեր 2010թ.-ին, ապա ծայրահեղ աղքատության մակարդակը կավելանար 7 անգամ, 2011թ.-ին՝ 6 անգամ, 2012թ.-ին՝ 6.5 անգամ, 2013թ.-ին՝ 6.7 անգամ, իսկ 2014թ.-ին՝ 7.6 անգամ:

Աղյուսակ 9.3. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մեղմացման վրա, 2010 և 2014թթ.

(տոկոսներով)

	Աղքատության մակարդակ		Ծայրահեղ աղքատության մակարդակ	
	2010թ	2014թ	2010թ	2014թ
Հետտրանսֆերտային մակարդակ (հետ կ/թոշակային և հետ սոցիալական աջակցություն)	35.8	30.0	3.0	2.3
Նախատրանսֆերտային մակարդակ (նախա կ/թոշակային և նախասոցիալական աջակցություն)	54.2	42.7	20.9	17.5
Նախքան կենսաթոշակների վճարումը (նախակ/թոշակային և հետսոցիալական աջակցություն)	51.9	41.4	17.3	14.7
Նախքան ընդամենը սոցիալական աջակցության վճարումը (նախա ԸՆ և այլ սոց աջակցություն, հետ կ/թոշակային)	39.4	30.6	6.8	4.3
Նախքան ԸՆ վճարումը (նախա ԸՆ; հետկ/թոշակային և այլ սոց. աջակցություն)	38.8	30.6	6.5	4.2

Աղբյուրը. 2010 և 2014թթ., SSԿԱՀ

Աղյուսակ 9.4-ում ներկայացված են աղքատության նախատրանսֆերտային և հետտրանսֆերտային մակարդակները միայն այն տնային տնտեսությունների համար, որոնք ստանում են այդ սոցիալական տրանսֆերտները: Սոցիալական տրանսֆերտների չվճարման դեպքում էապես կոժվարանա նման տնային տնտեսությունների ապրուստը: Ակնհայտ է, որ պատկերն այս դեպքում շատ ավելի ծանր կլինի, քան նախորդ աղյուսակի միջոցով՝ ողջ բնակչության կտրվածքով, գնահատված սոցիալական տրանսֆերտների չվճարման ազդեցությունը: Եթե չվճարվեն կենսաթոշակները, իսկ կենսաթոշակառու

բնակչությունը չկարողանա փոխհատուցել այդ կորուստն այլ աղբյուրների հաշվին, ապա աղքատության մակարդակը կենսաթոշակառուների շրջանում էապես կավելանա՝ 33.3%-ից կազմելով 54.0%, իսկ ծայրահեղ աղքատների տեսակարար կշիռը կենսաթոշակառուների շրջանում կավելանա 2.8%-ից մինչև 25.2%: Աղքատության մակարդակն ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների շրջանում շատ ավելի բարձր է երկրի աղքատության միջին մակարդակից, անգամ ԸՆ ստանալուց հետո՝ աղքատության 30.0% միջին մակարդակի համեմատ այն կազմում է 51.1%: Նման տնային տնտեսությունների շրջանում ԸՆ-ի դադարեցումը կհանգեցնի աղքատության մակարդակի աճի՝ 51.1%-ից 56.0%-ի, իսկ ծայրահեղ աղքատ բնակչության մասնաբաժինը 6.3%-ից կհասնի 20.9%-ի:

Աղյուսակ 9.4. Հայաստան. Կենսաթոշակ և /կամ սոցիալական աջակցություն ստացող տնային տնտեսությունների աղքատության մակարդակի վրա սոցիալական տրանսֆերտների ներգործությունը, 2014թ.

(տոկոսներով)

	Ծայրահեղ աղքատներ	Աղքատներ	Աղքատության խորություն (P1/P0)	Աղքատության սրություն
<i>Կենսաթոշակ ստացող տնային տնտեսություններ</i>				
Կենսաթոշակ ստանալուց հետո	2.8	33.3	5.6	1.5
Մինչև կենսաթոշակ ստանալը	25.2	54.0	23.3	14.9
<i>Սոցիալական աջակցություն ստացող տնային տնտեսություններ</i>				
Սոց աջակցություն ստանալուց հետո	5.2	46.2	8.8	2.8
Մինչև սոց.աջակցություն ստանալը	17.7	50.2	18.1	8.3
<i>ԸՆ ստացող տնային տնտեսություններ</i>				
ԸՆ ստանալուց հետո	6.3	51.1	10.0	3.2
Մինչև ԸՆ ստանալը	20.9	56.0	21.0	9.8

Աղբյուրը. SSԿԱՀ 2014թ.

Նշում. Աղքատության խորությունը (P1/P0) ցույց է տալիս աղքատ կամ ծայրահեղ աղքատ բնակչության սպառման միջին պակասորդը, համապատասխանաբար, աղքատության ընդհանուր կամ պարենային զժի նկատմամբ:

Եթե դադարեցվի դրամական աջակցությունը, ապա դա ոչ միայն կավելացնի աղքատության զժից ցած գտնվողների թվաքանակը, այլև կհանգեցնի աղքատության խորության ու սրության սաստկացման: Այսպիսով, սոցիալական տրանսֆերտներն էական ազդեցություն ունեն նպաստառու տնային տնտեսությունների աղքատության մակարդակի կրճատման վրա, թեև ոչ բոլոր նպաստառուներն են կարողանում հաղթահարել աղքատության բեռը դրամական աջակցություն ստանալուց հետո, նրանց շրջանում էապես կրճատվում է թե՛ աղքատության խորությունը, և թե՛ աղքատության սրությունը:

Մարզային կտրվածքով աղքատության մակարդակի նվազեցման վրա ընտանեկան նպաստի ազդեցությունը դիտարկելիս նույնպես ընդգծվում է ընտանեկան նպաստի կարևորությունը, հատկապես ծայրահեղ աղքատ բնակչության համար: Ընտանեկան նպաստի ազդեցությունը ծայրահեղ աղքատության մակարդակի նվազեցման վրա շարունակում է զգալի մնալ ք.Երևանում և բոլոր մարզերում: Եթե չվճարվի ընտանեկան

նպաստը և բնակչությունն այլ միջոցների հաշվին չկարողանա փոխհատուցել այդ կորուստը, ապա ծայրահեղ աղքատության մակարդակը կաճի 0.3-5.9%-ային կետով: Ընտանեկան նպաստը շատ կենսական է ՀՀ Տավուշի, Վայոց Ձորի, Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի ծայրահեղ աղքատ բնակչության համար, քանզի ընտանեկան նպաստի չվճարման դեպքում ծայրահեղ աղքատ բնակչության տեսակարար կշիռը կավելանա 2.0-3.2 անգամ:

Ընտանեկան նպաստի չվճարումը կհանգեցնի Տավուշի մարզում աղքատության ընդհանուր մակարդակի աճին՝ 11%-ով, Լոռու մարզում՝ 5%-ով, Վայոց Ձորում, Շիրակում և Սյունիքում՝ մոտ 3%-ով (Աղյուսակ 9.5):

Աղյուսակ 9.5 Հայաստան. Ընտանեկան նպաստի ներգործությունն աղքատության մակարդակի վրա՝ ըստ մարզերի, 2014թ.

(տոկոսներով)

	Հետտրանսֆերտային մակարդակ (վճարվել են կենսաթոշակները և սոցիալական աջակցությունը)		Նախքան ԸՆ վճարումը (նախա ԸՆ հետկենսաթոշակային և այլ սոց. աջակցություն)		ԸՆ չվճարման ազդեցությունը, փոփոխությունը, տոկոսային կետ	
	Ծայրահեղ աղքատության մակարդակ	Աղքատության մակարդակ	Ծայրահեղ աղքատության մակարդակ	Աղքատության մակարդակ	Ծայրահեղ աղքատություն	Աղքատություն
ք. Երևան	2.0	25.2	2.9	25.4	0.9	0.2
Արագածոտն	0.5	18.7	0.8	18.9	0.3	0.2
Արարատ	1.6	28.5	3.7	28.5	2.1	0
Արմավիր	2.9	29.0	3.8	29.0	0.9	0
Գեղարքունիք	2.1	32.3	4.3	32.6	2.2	0.3
Լոռի	3.0	36.4	6.7	38.3	3.7	1.9
Վոտայք	2.9	37.2	4.1	37.7	1.2	0.5
Շիրակ	3.8	44.2	8.7	45.4	4.9	1.2
Սյունիք	1.0	24.2	1.4	24.8	0.4	0.6
Վայոց Ձոր	0.6	18.2	1.9	18.8	1.3	0.6
Տավուշ	2.7	30.6	8.6	34.1	5.9	3.5
Ընդամենը	2.3	30.0	4.2	30.6	1.9	0.6

Աղբյուրը. *SSYUՀ 2014թ.*

9.4. Սոցիալական տրանսֆերտների արդյունավետությունը

Ովքե՞ր են ստանում սոցիալական տրանսֆերտներ: Տնային տնտեսությունների հետազոտության տվյալների հիման վրա սոցիալական տրանսֆերտների արդյունավետությունը գնահատելու համար դիտարկվել է «նախատրանսֆերտային» աղքատ, ծայրահեղ աղքատ, ինչպես նաև ոչ աղքատ բնակչության ընդգրկվածությունը սոցիալական աջակցության ծրագրերում: Որքան բարձր է աղքատ և ծայրահեղ աղքատ բնակչության, և ցածր՝ ոչ աղքատ բնակչության ընդգրկվածությունը, այնքան արդյունավետ է սոցիալական աջակցությունը, այնքան բարձր է հասցեականությունն ուղղված առավել կարիքավորներին:

Ընտանեկան նպաստի համակարգի դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ ծայրահեղ աղքատների ընդգրկվածությունն ԸՆ համակարգում 2008թ.-ի 77.5%-ի համեմատ 2014թ.-ին ընտանեկան նպաստ են ստացել «մինչև ԸՆ» ծայրահեղ աղքատների միայն 65.8%-ը (Աղյուսակ 9.6): Միննույն ժամանակ, 2014թ.-ին ընտանեկան նպաստ ստանում էր «մինչև

ԸՆ» ոչ աղքատների 8.4%-ը, ինչն աճել է համեմատվող ժամանակահատվածի նկատմամբ (2008թ.-ին՝ 7.4%):

Հարկ է նշել, որ կենսաթոշակները, ի տարբերություն ընտանեկան նպաստի, վճարվում են բոլոր նրանց, ովքեր ունեն կենսաթոշակ ստանալու իրավունք՝ առանց աղքատության մակարդակը հաշվի առնելու: Ուստի ընդգրկվածության խնդիր այս բնագավառում չկա: Իսկ ընտանեկան նպաստի ծրագրում նման խնդիր առկա է:

Աղյուսակ 9.6. Հայաստան. Ովքե՞ր են ստացել սոցիալական տրանսֆերտներ 2008 և 2014թթ.-ին

(տոկոսներով)

	Մինչև սոցիալական աջակցություն ստանալը		Մինչև ընտանեկան նպաստ ստանալը		Մինչև կենսաթոշակ ստանալը	
	2008	2014	2008	2014	2008	2014
«Նախատրանսֆերտային» բնակչության ընդգրկվածությունը կենսաթոշակային և սոցիալական աջակցության ծրագրերում						
Աղքատներ	37.6	27.1	33.8	24.2	70.9	72.0
Ծայրահեղ աղքատներ	79.3	67.4	77.5	65.8	95.4	94.9
Ոչ աղքատներ	11.2	11.9	7.4	8.4	36.5	43.4

Աղբյուրը. 2008 և 2014թթ., SSԿԱՀ

Նշում. աղքատների և ծայրահեղ աղքատների ընդգրկվածությունն ավելի բարձր է, քան ոչ աղքատների ընդգրկվածությունը:

Սոցիալական տրանսֆերտները և անհավասարությունը. SSԿԱՀ գնահատականները ցույց են տալիս, որ սոցիալական տրանսֆերտները նպաստում են նաև սպառման բաշխվածության միջև անհավասարության նվազեցմանը: Սպառման ագրեգատի բաշխվածության նախատրանսֆերտային Ջինիի գործակիցը 2014թ.-ին նվազում է՝ 0.377-ից կազմելով 0.289, երբ սպառման ագրեգատին ավելացվում են կենսաթոշակները, իսկ բոլոր սոցիալական տրանսֆերտների ավելացմամբ սպառման անհավասարությունը կրճատվում է մինչ 0.277 (Աղյուսակ 9.7):

Աղյուսակ 9.7. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների ներգործությունը սպառման ագրեգատի բաշխվածության անհավասարության վրա (սպառման ագրեգատի Ջինիի գործակիցները) 2008-2014թթ.-ին

	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Նախատրանսֆերտային (մինչև կենսաթոշակի և սոց աջակցության գումարներ ստանալը)	0.316	0.346	0.359	0.357	0.359	0.354	0.377
Մինչև սոցիալական աջակցություն ստանալը (ավելացել է կենսաթոշակների գումարը՝ առանց սոցիալական աջակցության)	0.258	0.272	0.282	0.280	0.282	0.282	0.289
Հետտրանսֆերտային (ամբողջ սոցիալական տրանսֆերտների գումարը ստանալուց հետո)	0.242	0.257	0.265	0.267	0.269	0.271	0.277

Աղբյուրը. SSԿԱՀ 2008-2014թթ

9.5. Ընտանեկան նպաստ

2014թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության գնահատականների համաձայն, տնային տնտեսությունների 12.6%-ը դիմել է ԸՆ համակարգին, գնահատվել է անապահով և ստանում է ընտանեկան նպաստ: Տնային տնտեսությունների 0.5%-ը հաշվառվել է ԸՆ համակարգում, սակայն նպաստ չի ստացել և 0.3%-ը հաշվառված է, ստանում է հրատապ օգնություն: ԸՆ համակարգին ընդհանրապես չի դիմել տնային տնտեսությունների գերակշիռ մասը՝ 86.6%-ը. որպես հիմնական պատճառներ հնչեցվել են՝ «միևնույն է, ոչնչի չէի հասնի» 54.1%-ը կամ իրենց ապահովված են համարել 19.9%-ը: Նպաստ ստացող տնային տնտեսությունների մեջ ժամկետով ամենաբարձր ցուցանիշը կազմել է 2 տարին՝ տնային տնտեսությունների 14.1%, 1 տարին՝ 13.6%, երեք տարին՝ 13.3%: Եթե վերջին 12 ամիսների ընթացքում նշանակվել է հրատապ օգնություն, ապա տարվա մեջ մեկ անգամ ստացել են տնային տնտեսությունների 40.3%-ը, 4 անգամ՝ 29.6%-ը, երեք անգամ՝ 27.9%-ը և երկու անգամ՝ 2.2%-ը:

2014թ.-ին համակարգին դիմող տնային տնտեսությունների համամասնությունը կազմել է 13.4%: Դիմողների շրջանում նպաստի իրավունք ստացողների մասնաբաժինը կազմել է 94%:

Սակայն 2014թ.-ին նպաստի իրավունքից զրկված տնային տնտեսությունների մասնաբաժինը փոքր է (մոտ 1%), նրանցից 87%-ը բանավոր տեղեկացվել է նպաստի դադարեցման/մերժման մասին, ընդ որում նպաստի դադարեցման/մերժման պատճառները հասկանալի են 31%-ի համար, սակայն 9%-ը բողոքարկել է այն, իսկ 21%-ի համար պատճառները հասկանալի չեն եղել և նրանք դիմել են պարզաբանման: Տնային տնտեսությունների 47%-ը միանշանակ փաստել է, որ հեշտ չի եղել ձեռք բերել հաշվառման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Փաստաթղթերի ձեռք բերման համար տնային տնտեսությունների 15%-ը կատարել է վճարումներ:

Սպասարկող սոցիալական տեսուչի աշխատանքից բավարարված են՝ լիովին կամ որոշ չափով, հաշվառված տնային տնտեսությունների 95%-ը: Հաշվառվելուց հետո ընտանիքում տեղի ունեցած փոփոխությունների մասին սոցիալական ծառայությանը տեղեկացրել են տնային տնտեսությունների միայն 33%-ը, քանի որ տնային տնտեսությունների 59%-ի մոտ ընտանիքում ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել, հետևաբար փոփոխությունների մասին ոչինչ չեն հայտնել:

Ընտանեկան նպաստի համակարգն արդարացի է համարել տնային տնտեսությունների միայն 26%-ը, տնային տնտեսությունների 16%-ը գտել է, որ համակարգն արդարացի չէ, 24%-ը՝ համոզված չէ դրա մեջ, իսկ 34 %-ը դժվարացել է որևէ կարծիք հայտնել:

Թե ընտանեկան նպաստի համակարգով օգնություն ստացող ընտանիքների, որ տոկոսն են կազմում իրական կարիքավորները, տնային տնտեսությունների մեծ մասը՝ 48%-ը, դժվարացել է պատասխանել, մյուսների կարծիքը բաշխվել է հետևյալ կերպ՝ 12%-ը կարծում է, որ կարիքավոր են նպաստառուներից գրեթե բոլորը, 10%-ը կարծում է, որ կարիքավոր են կեսից ավելին, 12%-ը կարծում է, որ կարիքավոր է կեսը, իսկ 12%-ի կարծիքով կարիքավոր է կեսից էլ քիչը, 6%-ը կարծում է, որ կարիքավոր է նպաստառուների

շատ փոքր մասը: Հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում մարդասիրական օգնություն է ստացել տնային տնտեսությունների միայն 5.3%-ը:

Աղյուսակ 9.8-ը ներկայացնում է ՏՏԿԱՀ հիման վրա ԸՆ բյուջեի և ընտանեկան նպաստ ստացողների բաշխումն՝ ըստ «մինչև ԸՆ ստանալը» սպառման քվինտիլային խմբերի: Տվյալներն ակնհայտ ցույց են տալիս, որ նպաստառուների 74.1%-ը 2014թ. «մինչև ԸՆ» սպառման ամենաստորին քվինտիլներից են, որոնք ստանում են ԸՆ բյուջեի 75.9%-ը: ԸՆ միջոցների իրական «արտահոսքը» սպառման վերին քվինտիլների նպաստառուներին բաշխված միջոցներն են, այսինքն՝ նպաստառուների այն 14.4%-ը, որոնց հատկացվել է միջոցների 13.0%-ը, կարիքավոր չեն: Այդուհանդերձ, ծրագրի հասցեականության բարելավման անհրաժեշտությունը դեռ առկա է, քանզի ամենաաղքատ 20% բնակչության 49%-ը դուրս է մնում դրամական աջակցության ծրագրերից:

Աղյուսակ 9.8. Հայաստան. Ընտանեկան նպաստ և այլ սոցիալական աջակցություն ստացողների և վճարված գումարների բաշխումն ըստ «մինչև ԸՆ» սպառման քվինտիլների, 2014թ.

(տոկոսներով)

	Քվինտիլներ				
	Ստորին	2-րդ	3-րդ	4-րդ	Վերին
<i>Ընտանեկան նպաստ</i>					
Նպաստառուներ	50.6	23.5	11.5	8.9	5.5
Գումարներ	53.3	22.6	11.1	8.3	4.7
<i>Սոցիալական աջակցություն (ներառյալ ԸՆ)</i>					
Նպաստառուներ	47.5	22.7	11.7	9.3	8.8
Գումարներ	25.0	21.8	19.0	17.3	16.9

Աղբյուրը. ՏՏ ԿԱՀ 2014թ.

Բնակչության ո՞ր խմբերն ունեն ավելի մեծ հավանականություն ընդգրկվելու կամ դուրս մնալու ԸՆ համակարգից: Համաձայն ՏՏԿԱՀ արդյունքների հիման վրա կատարված գնահատականների, աղքատության ռիսկը շարունակում է բարձր մնալ 4 և ավելի երեխաներ ունեցող և առանց աշխատող անդամի կամ առանց վարձու աշխատանքից ստացվող եկամտի տնային տնտեսություններում:

Աղքատության մակարդակը բարձր է նաև այն տնային տնտեսություններում, որոնք չունեն բացակա անդամներ (Աղյուսակ 9.9):

Աղյուսակ 9.9. Հայաստան. Աղքատության մակարդակը և «մինչև ԸՆ» ընդգրկվածությունն ըստ տնային տնտեսությունների առանձին խմբերի, 2008 և 2014թթ.

(տոկոսներով)

Տնային տնտեսության առանձին խումբը	Ծայրահեղ աղքատության մակարդակը		Աղքատության մակարդակը		Մինչև ԸՆ աղքատների ընդգրկվածությունը	
	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.
4 և ավելի երեխաներով տ/տ-ներ	23.1	13.4	56.7	50.6	76.7	62.5
Առանց աշխատող անդամի տ/տ-ներ	11.6	10.2	43.6	41.5	71.1	65.7
Առանց վարձու աշխատանքից ստացվող եկամտի տ/տ-ներ	8.3	6.5	37.6	35.0	69.4	56.7

Տնային տնտեսության առանձին խումբը	Ծայրահեղ աղքատության մակարդակը		Աղքատության մակարդակը		Մինչև ԸՆ աղքատների ընդգրկվածությունը	
	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.
Գյուղաբնակ հողագուրկ տ/տ-ներ	4.0	4.6	28.3	30.7	65.8	59.4
Առանց բացակա անդամի տ/տ ներ	4.8	4.3	31.1	32.0	68.3	57.3

Աղբյուրը. SSԿԱՀ 2008 և 2014թթ.

Ընտանեկան նպաստ ստանալու հավանականությունը. Որոշակի տնային տնտեսության համար ընտանեկան նպաստ ստանալու հավանականությունը պայմանավորող որոշիչ գործոնների բացահայտման նպատակով գնահատվել են վիճակագրական մոդելի պարամետրերը (ռեգրեսիոն մոդելի արդյունքները ներկայացված են Հավելված 4-ի Աղյուսակ A9.2-ում): Դիտարկվել են ԸՆ ստանալու հավանականության վրա հավանական ազդեցություն ունեցող հետևյալ գործոնները՝ տնային տնտեսության բնութագրիչները, այն է՝ տնային տնտեսության չափը, տնային տնտեսության գլխավորի տարիքը, սեռը, կրթությունը, տնային տնտեսության տնտեսական նկարագիրը՝ տնային տնտեսության անդամների զբաղվածության կարգավիճակը և սպառումը մեկ չափահաս անդամի հաշվով, և տնային տնտեսության այլ բնութագրիչները՝ բնակարանային պայմանները (բնակարան, առանձնատուն, ժամանակավոր կացարան և այլն), սեփական մեքենայի և հողի առկայությունը¹: Պրոբիտ մոդելում այս գործոնները կիրառվել են որպես անկախ՝ բացատրող փոփոխականներ, իսկ սոցիալական աջակցություն ստանալը՝ կախյալ փոփոխական:

ԸՆ ստանալու առավել մեծ հավանականություն ունեն երեխաները՝ այլ տարիքային խմբերի համեմատ: Որքան մեծ է երեխաների մասնաբաժինը տնային տնտեսության կազմում, տնային տնտեսության չափը պահպանելով անփոփոխ, այնքան մեծ է ԸՆ ստանալու տնային տնտեսության հավանականությունը՝ համեմատվող տարիքային խմբի (45-ից 60 տարեկան չափահաս անդամների մասնաբաժնի) նկատմամբ: Տնային տնտեսությունում 0-5, 6-14 և 15-18 տարեկան անդամների առկայությունը դրական է ազդում ընտանեկան նպաստ ստանալու հավանականության վրա (համապատասխանաբար 10.2, 9.8 և նույն 9.8 տոկոսային կետով):

Եթե տնային տնտեսության գլխավորը կին է, ապա այլ հավասար պայմաններում տնային տնտեսության ԸՆ ստանալու հավանականությունն ավելի մեծ է (3.8 տոկոսային կետով)՝ տղամարդ գլխավոր ունեցող տնային տնտեսությունների համեմատ:

Եթե տնային տնտեսության գլխավորն ունի բարձրագույն կրթություն, ապա, միջին հաշվով, տարրական կրթություն ունեցող գլխավորով տնային տնտեսությունների համեմատ, ԸՆ ստանալու հավանականությունը շատ ավելի ցածր է:

Տնային տնտեսության գլխավորի զբաղվածության կարգավիճակը սերտորեն առնչվում է ԸՆ ստանալու հավանականության հետ: Եթե տնային տնտեսության գլխավորը գործազուրկ է, ապա բարձր է տնային տնտեսության ԸՆ ստանալու հավանականությունը (9.5 տոկոսային կետով) համեմատվող խմբի, այն է՝ աշխատող գլխավոր ունեցող տնային տնտեսության նկատմամբ:

¹Այս գործոնների մեծ մասը ներառված է նաև տնային տնտեսությունների անապահովության աստիճանի գնահատման բանաձևում:

ԸՆ ստանալու հավանականությունը պայմանավորող դիտարկված հաջորդ բնութագրիչը սեփական մեքենայի առկայությունն է: Սեփական մեքենայի առկայությունը նվազեցնում է ԸՆ ստանալու հավանականությունը (5.4 տոկոսային կետով):

Ժամանակավոր կացարանում ապրելը (հակառակ սպասվածի) իջեցնում է ԸՆ ստանալու հավանականությունը (5.2 տոկոսային կետով):

Գլուխ 10. Բնակչության բնակարանային պայմանները

Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություններն (ՏՏԿԱՀ) առանձնահատուկ հնարավորություն են ընձեռում հավաքագրելու տվյալներ՝ բնակչության կենցաղային պայմանների, կոմունալ ծառայությունների մատչելիության և բնակարանային խնդիրներին առնչվող այլ հարցերի շուրջ: Այս գլխում ներկայացված է 2008թ.-ից 2014թ.-ն ընկած ժամանակահատվածում, ՏՏԿԱՀ-ի տվյալներով ստացված, բնակարանային պայմանների հիմնական ցուցանիշների մասին համեմատական վերլուծությունը:

10.1. Բնակչության բնակարանային պայմանները

Հայաստանում 2014թ. տնային տնտեսությունների գերակշիռ մասը (92%-ը) հանդիսանում է իր կացարանի սեփականատերը: Քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունները գլխավորապես բնակվում են բազմաբնակարան շենքերում՝ 67.5%, իսկ գյուղական բնակավայրերում գերակշռում են առանձնատները՝ 94.0% (Աղյուսակ 10.1): 2014թ.-ին միայն քաղաքային բնակավայրերում է բնակչությունն ապրում հանրակացարաններում: Հանրակացարաններում, ժամանակավոր և այլ տեսակի կացարաններում բնակվող քաղաքային և գյուղական բնակչության համամասնությունը կազմում է 4.7 և 1.8%: Ժամանակավոր կացարաններում բնակվող տնային տնտեսությունների մեծ մասն աղքատ է և պատկանում է 1-ին քվինտիլին:

Աղյուսակ 10.1. Հայաստան: Տնային տնտեսությունների բաշխումն ըստ կացարանի տեսակի, բնակավայրի, աղքատության մակարդակի և սպառման քվինտիլային խմբերի, 2014թ.

(տոկոսներով)

	Ընդամենը	այդ թվում՝ ըստ կացարանի տեսակի				
		առանձնատուն	բնակարան	հանրակացարան	ժամանակավոր կացարան	այլ տեսակի կացարան
Ըստ բնակչության վայրի						
Քաղաք	100	27.8	67.5	1.9	2.5	0.3
այդ թվում Երևան	100	23.8	73.3	2.1	0.3	0.5
Այլ քաղաք	100	32.0	61.4	1.7	4.8	0.1
Գյուղ	100	94.0	4.2	-	1.8	0.0
Ընդամենը	100	50.2	46.1	1.3	2.2	0.2
Ըստ աղքատության մակարդակի						
Ոչ աղքատ	100	50.1	47.3	1.3	1.2	0.1
Աղքատ	100	51.1	42.8	0.9	4.8	0.4
Ծայրահեղ աղքատ	100	43.1	41.7	3.5	11.7	-
Ըստ սպառման ազդեցատի քվինտիլային խմբերի						
Առաջին	100	52.6	39.9	1.3	5.9	0.3
Երկրորդ	100	51.8	43.9	0.6	3.5	0.2
Երրորդ	100	52.8	43.7	1.6	1.9	-
Չորրորդ	100	51.7	45.5	1.8	0.8	0.2
Հինգերորդ	100	43.8	54.5	1.0	0.5	0.2

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2014թ.

Կացարանների ծանրաբեռնվածությունը լուրջ խնդիր է երկրում: 2014թ.-ի հետազոտության տվյալներով մեկ սենյականոց բնակարանների ծանրաբեռնվածությունը կազմել է 2.32 մարդ: Կացարանների ծանրաբեռնվածությունը կախված է աղքատության մակարդակից: Այսպես, հետազոտության տվյալների համաձայն, մեկ սենյականոց բնակարանների ծանրաբեռնվածությունն ամենացածր քվինտիլում 1.5 անգամ գերազանցում է ամենաբարձր քվինտիլում գրանցված ցուցանիշը: 2014թ.-ին այդ ծանրաբեռնվածությունն ամենացածր քվինտիլում կազմել է 2.76 մարդ, իսկ ամենաբարձր քվինտիլում՝ 1.89 մարդ: 1 000 տնային տնտեսություններից 623 տնային տնտեսությունում (2008թ.-ի՝ 877-ի և 2013թ.-ի՝ 594-ի համեմատ) մեկ սենյականոց բնակարաններում գրանցվել է 2 և ավելի առկա մարդ: 2014թ.-ին գյուղական բնակչության ապահովվածությունն ընդհանուր մակերեսով բավական գերազանցել է քաղաքայինին (Աղյուսակ 10.2): Միևնույն ժամանակ, բնակարանային ֆոնդի բարեկարգվածությունը գյուղում անհամեմատ ցածր է, քան քաղաքում: Խոհանոցի, սառը ջրի, ողողվող զուգարանի և լոգարանի (գործող) միաժամանակյա առկայություն գրանցվել է գյուղական բնակավայրերի միայն 14.4% տնային տնտեսությունների մոտ, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 88.7%:

Աղյուսակ 10.2. Հայաստան. Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2014թ.

(քառ.մ.)

Ընդամենը	24.15
այդ թվում՝ քաղաքային համայնքներում	21.83
գյուղական համայնքներում	28.21

Աղբյուրը. *SSYUZ 2014թ.*

Հետազոտության արդյունքում ստացվել են նաև տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականներն իրենց բնակարանային պայմանների վերաբերյալ (Աղյուսակ 10.3): 2014թ.-ին տնային տնտեսությունների մեծ մասի՝ 60.1 %-ի գնահատմամբ իրենց բնակարանային պայմանները բավարար են (2008թ.-ի 60.2%-ի և 2013թ.-ի՝ 63.1%-ի, դիմաց): Յուրաքանչյուր վեցերորդ տնային տնտեսություն՝ մոտ 18%-ը, իր բնակարանային պայմանները գնահատել է վատ, իսկ 4%-ը՝ շատ վատ: Միայն 17.6 %-ն է իր բնակարանային պայմաններին տվել լավ կամ շատ լավ գնահատական (2008թ.-ի 12.2%-ի և 2013թ.-ի՝ 16.9%-ի դիմաց): Բնակարանային պայմանների վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականները դիտարկվել են նաև ըստ բնակության վայրի, աղքատության մակարդակի և ըստ սպառման ագրեգատի քվինտիլային խմբերի: 2014թ.-ին քաղաքաբնակ տնային տնտեսություններն ավելի բավարարված են իրենց բնակարանային պայմաններից, քան նմանատիպ գյուղաբնակ տնային տնտեսությունները (Աղյուսակ 10.3):

Առավել աղքատ տնային տնտեսությունները, որոնք գտնվում են ամենացածր քվինտիլային խմբերում, իրենց բնակարանային պայմաններից ավելի դժգոհ են, քան ոչ աղքատները, ամենավերին քվինտիլում բնակարանային պայմաններից բավարարվածության մակարդակն ավելի բարձր է: Ամենաստորին սպառման քվինտիլում 40%-ն իր բնակարանային պայմանները գնահատել է վատ կամ շատ վատ, իսկ ամենավերին քվինտիլում նման տնային տնտեսությունները կազմել են 13%:

Աղյուսակ 10.3. Հայաստան. Բնակարանային պայմանների վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականները, 2014թ.

(տոկոսներով)

	Ընդամենը	Բնակարանային պայմանների վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականները				
		շատ լավ	լավ	բավարար	վատ	շատ վատ
Ըստ բնակության վայրի						
Քաղաք	100	1.0	18.3	59.5	16.8	4.4
այդ թվում՝ ք. Երևան	100	1.2	15.4	63.1	16.7	3.6
այլ քաղաք	100	0.7	21.3	56.0	16.9	5.1
Գյուղ	100	0.5	13.8	61.3	20.9	3.5
Ընդամենը	100	0.8	16.8	60.1	18.2	4.1
Ըստ աղքատության մակարդակի						
Ոչ աղքատ	100	1.0	19.0	62.5	14.9	2.6
Աղքատ	100	0.2	11.1	54.8	26.6	7.3
Ծայրահեղ աղքատ	100	-	0.8	36.5	41.4	21.3
Ըստ սպառման աղբեգատի քվինտիլային խմբերի						
Առաջին	100	0.2	9.0	51.3	29.4	10.1
Երկրորդ	100	0.6	11.7	61.2	21.9	4.6
Երրորդ	100	0.4	16.0	60.8	19.4	3.4
Չորրորդ	100	0.5	18.5	65.1	13.6	2.3
Հինգերորդ	100	2.0	24.8	60.5	11.0	1.7

Աղբյուրը. SSYUZ 2014թ.

Նշում. Աղքատներն այս աղյուսակում գնահատվել են որպես ընդամենը աղքատ տնային տնտեսություններից հանած ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համամասնություն:

Բնակարանային պայմանները համեմատաբար ավելի վատ են աղքատ և հատկապես ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների մոտ: Եթե, ընդհանուր առմամբ, բնակարանի մակերեսի սակավությունից դժգոհել է հարցմանը մասնակից տնային տնտեսությունների 23.2%-ն, ապա աղքատ տնային տնտեսությունների շրջանում բնակմակերեսի չափից դժգոհ է եղել տնային տնտեսությունների 29.9%-ը, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների 45.9%-ը (Աղյուսակ 10.4.): Նույն կերպ ծայրահեղ աղքատների համար խնդիր է հանդիսացել ջեռուցման պակասը և խոնավությունը, ինչպես նաև՝ քանդված պատերը և հատակը, կաթող տանիքը, վատ ջրամատակարարումը և վատ լուսավորվածությունը:

Աղյուսակ 10.4. Հայաստան. Բնակարանային պայմանների հետ կապված տնային տնտեսությունների բողոքները 2014թ.-ին ըստ աղքատության մակարդակի

(տոկոսներով)

	Ոչ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ
Ընդամենը	100*	100*	100*
Մակերեսի սակավություն	20.4	29.9	45.9
Աղմուկ հարևաններից և շրջապատից	5.1	4.6	4.2
Վատ լուսավորվածություն	8.7	21.1	31.7
Ջեռուցման պակաս	40.6	55.9	75.5
Խոնավություն	27.9	40.5	60.2
Կաթող տանիք	13.6	18.3	36.4
Քանդված պատեր և հատակ	17.5	31.4	60.3
Քանդված փեղկեր և դռներ	14.3	25.8	49.4
Երթևեկության խցանում	3.4	1.7	1.8
Արդյունաբերական արտանետում	3.8	2.2	-
Վերելակր հաճախակի չի գործում	4.8	3.2	5.7
Ջրամատակարարումը վատ է	17.5	20.9	34.7
Աղբահանությունը վատ է	20.4	28.4	31.8
Բազմաբնակարան շենքի ընդհանուր	17.2	17.0	27.3

	Ոչ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ
օգտագործման տարածքների և բակերի սպասարկումը վատն է			
Կանաչապատ գոտիների պակաս	45.8	49.5	55.0
Այլ	0.3	0.4	-

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2014թ.

Նշում. *Գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ տնային տնտեսությունները կարող էին նշել մի քանի պատասխան

2014թ.-ին տնային տնտեսությունների միայն 3.1 %-ը կամ 25.2 հազարն է կարողացել վերանորոգել իր կացարանը վերջին մեկ տարվա ընթացքում, ընդ որում նրանց գերակշռող մասը՝ 85.6%-ը, եղել են ոչ աղքատ տնային տնտեսությունները, մինչդեռ աղքատ տնային տնտեսությունները կազմել են 14.3%, իսկ ծայրահեղ աղքատները՝ 0.1%:

10.2. Խմելու ջրի մատչելիությունը, ջրահեռացումը և աղբահանությունը

Խմելու ջրի մատչելիությունը. 2014թ.-ի հետազոտության տվյալներով կենտրոնացված ջրամատակարարման համակարգ ունեն հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների մեծամասնությունը: Քաղաքաբնակ տնային տնտեսությունների 99.7%-ը և գյուղաբնակ տնային տնտեսությունների 95.5%-ն ունեն կենտրոնացված ջրամատակարարման համակարգ (Աղյուսակ 10.5):

Կենտրոնացված ջրամատակարարում ունեցող տնային տնտեսությունների 93.4%-ի մոտ ջրի ծորակը գտնվում է տանը, 5.0%-ի մոտ՝ բակում, իսկ 1.6%-ի մոտ՝ փողոցում:

Աղյուսակ 10.5. Հայաստան. Խմելու ջրի մատչելիությունը տնային տնտեսությունների համար 2008, 2014թթ.-ի համեմատականը

(տոկոսներով)

Ջրի հիմնական աղբյուրը	Ընդամենը հանրապետությունում		Քաղաքային բնակավայրերում		Գյուղական բնակավայրերում	
	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.
Կենտրոնացված ջրամատակարարում	97.1	98.3	99.5	99.7	92.4	95.5
մինչև 1 ժամ	0.7	0.0	0.1	0.0	1.9	0.1
1-5 ժամ	31.3	12.8	31.2	8.6	31.4	21.5
6-12 ժամ	28.6	16.2	32.6	14.3	20.5	20.0
13-23 ժամ	5.7	8.8	5.9	10.1	5.3	6.2
24 ժամ	33.7	62.2	30.2	67.0	40.9	52.2
Ջրհոր, աղբյուր	1.2	0.5	0.1	0.3	3.1	0.8
Ջրամատակարարման սեփական համակարգ	0.5	0.8	0.1	-	1.3	2.7
Բերովի ջուր	1.1	0.2	0.2	-	3.0	0.5
Այլ աղբյուրներ	0.1	0.2	0.1	0.0	0.2	0.5

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2008 և 2014թթ

Կենտրոնացված ջրամատակարարման համակարգը միշտ չէ, որ ապահովում է բավարար ջրամատակարարման ծառայություններ: 2014թ.-ին տնային տնտեսություններն օրական ջուր ունեցել են միջինը 18 ժամ: Կենտրոնացված ջրամատակարարման համակարգ ունեցող տնային տնտեսությունների միայն 62.2%-ն է ունեցել շուրջօրյա ջրամատակարարում: Չնայած դա 2008թ-ի համեմատ ակնհայտ բարելավում է, այնուամենայնիվ, 2014թ-ին տնային տնտեսությունների 12.8%-ը ջուր է ունեցել օրական 1-5 ժամ: Հանրապետության ոչ բոլոր բնակավայրերում է, որ բնակչությանը ջուրը մատուցվել է

ամեն օր: Ամսվա ընթացքում տնային տնտեսությունները ջուր ունեցել են միջինում 29,6 օր: 2014թ-ին քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունների 0.2%-ը ջուր է ունեցել ամսական 1-7 օր, 0.1%-ը՝ 2 շաբաթ, 2.0%-ը՝ 3 շաբաթ: Գյուղական բնակավայրերում ամսական 1-7 օր ջուր չի ունեցել ոչ մի տնային տնտեսություն: Տնային տնտեսությունների 1.9%-ը ջուր է ունեցել 2 շաբաթ, 6.7%-ը՝ 3 շաբաթ: Հանրապետությունում տնային տնտեսությունների 0.1%-ը ջուր է ունեցել ամսական 1-7 օր, 0.7%-ը՝ 2 շաբաթ, 3.5%-ը՝ 3 շաբաթ:

Աղյուսակ 10.6. Հայաստան Զրամատակարարման ծառայությունների մատչելիությունն ըստ սպառման ագրեգատի քվինտիլային խմբերի, 2008 և 2014թթ.

(տոկոսներով)

	Առաջին քվինտիլ		Երկրորդ քվինտիլ		Երրորդ քվինտիլ		Չորրորդ քվինտիլ		Հինգերորդ քվինտիլ	
	2008թ	2014թ	2008թ	2014թ	2008թ	2014թ	2008թ	2014թ	2008թ	2014թ
Կենտրոնացված ջրամատակարարում	96.6	98.2	96.4	97.0	96.0	98.3	97.8	98.3	98.2	99.1
<u>մինչև 1 ժամ</u>	1.1	-	1.0	-	0.5	-	0.5	-	0.5	0.1
<u>1-5 ժամ</u>	35.5	15.7	33.8	14.3	28.6	12.5	30.1	13.4	29.4	9.6
<u>6-12 ժամ</u>	24.0	16.8	26.9	14.6	28.2	17.4	32.7	17.7	30.3	14.4
<u>13-23 ժամ</u>	4.5	8.0	6.5	10.0	6.2	10.4	5.1	9.2	6.1	7.0
24 ժամ	34.9	59.5	31.8	61.1	36.5	59.7	31.6	59.7	33.7	68.9
Զրիռ, աղբյուր	1.6	0.5	1.2	0.4	1.1	0.5	1.4	0.4	0.6	0.5
Զրամատակարարման սեփական աղբյուր	0.5	0.9	0.7	2.0	0.8	0.7	0.3	1.1	0.5	0.3
Բերովի ջուր	1.0	0.1	1.7	0.4	2.0	0.3	0.3	0.1	0.7	-
Այլ աղբյուրներ	0.3	0.3	-	0.2	0.1	0.2	0.2	0.1	0.0	0.1

Աղբյուրը. *SSYUZ 2008 և 2014թթ.*

2014թ.-ին տնային տնտեսություններում կենտրոնացված ջրամատակարարման առկայությունը, ըստ սպառման ագրեգատի քվինտիլային բաշխվածության, շատ չի տարբերվում և կազմում է 97- 99%:

Այդուհանդերձ, ոչ աղքատ տնային տնտեսությունների 17.5%-ը, աղքատ տնային տնտեսությունների 20.9%-ը և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների 34.7%-ը նշել են ջրամատակարարման ծառայության վատ վիճակ (Աղյուսակ 10.4):

Զրահեռացման կենտրոնացված համակարգ. 2014թ.-ին երկրում ավելացել է ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվող տնային տնտեսությունների համամասնությունը՝ 2008թ.-ի համեմատ (համապատասխանաբար 68.5 և 66.7 տոկոս) (Աղյուսակ 10.7):

Աղյուսակ 10.7. Հայաստան. Ջրահեռացման կենտրոնացված համակարգի մատչելիությունը, 2008 և 2014թթ.

(տոկոսներով)

	Քաղաքային բնակավայրերը		Երևան		Այլ քաղաքներ		Գյուղական բնակավայրեր		Ընդամենը	
	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.
Ջրահեռացման կենտրոնացված համակարգ	91.1	94.9	96.5	98.1	85.5	91.6	19.0	16.5	66.7	68.5
Ջրահեռացման կենտրոնացված համակարգը չի գործում	0.2	5.0	0.1	1.8	0.3	8.4	1.3	0.0	0.6	0.0
Կոյուղու բացակայություն	8.7	0.1	3.4	0.1	14.2	0.0	79.7	83.5	32.7	31.5

Աղբյուրը. *SSԿԱՀ 2008 և 2014թթ.*

Ջրահեռացման կենտրոնացված համակարգի առումով բավական զգալի է քաղաք-գյուղ տարբերությունը: Ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում են Երևանի գրեթե բոլոր բնակիչները (98.1%): Այլ քաղաքային բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգ ունեն տնային տնտեսությունների 91.6%-ը, մինչդեռ գյուղական բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում են տնային տնտեսությունների միայն 16.5%-ը: Դա լուրջ խնդիր է, քանզի կոյուղու առկայությունը շատ կարևոր է բավարար սանիտարական պայմաններ ապահովելու համար, ինչպես նաև առողջապահության տեսանկյունից:

Ջրահեռացման կենտրոնացված համակարգի առկայությունը, ըստ սպառման ագրեգատի քվինտիլային խմբերի (Աղյուսակ 10.8), ցույց է տալիս, որ ամենահարուստ՝ հինգերորդ քվինտիլային խումբն ունի ավելի բարձր մատչելիություն համակարգի նկատմամբ, քան առաջին՝ ամենաաղքատ քվինտիլային խումբը (76.2%՝ 62.1%-ի դիմաց):

Աղյուսակ 10.8. Հայաստան. Ջրահեռացման կենտրոնացված համակարգի առկայությունն ըստ սպառման ագրեգատի քվինտիլային խմբերի, 2014թ.

(տոկոսներով)

Ջրահեռացման համակարգի առկայությունը	Սպառման ագրեգատի քվինտիլային խմբեր				
	Առաջին	Երկրորդ	Երրորդ	Չորրորդ	Հինգերորդ
Ջրահեռացման կենտրոնացված համակարգ	62.1	66.9	67.0	67.2	76.2
Ջրահեռացման կենտրոնացված համակարգը չի գործում	37.7	33.1	32.9	32.8	23.8
Կոյուղու բացակայություն	0.2	-	0.1	-	-

Աղբյուրը. *SSԿԱՀ 2014թ.*

Աղբահանությունը. 2014թ.-ին 2008թ.-ի համեմատ, երկրում ավելացել է աղբահանության կենտրոնացված համակարգից (աղբամուղ, աղբը հավաքվում է բեռնատարով, աղբակույտի մեջ) օգտվող տնային տնտեսությունների համամասնությունը (87.2%՝ 80.9%-ի դիմաց) (Աղյուսակ 10.9): Աղբահանության ծառայությունը համեմատաբար լավ է գործում քաղաքային բնակավայրերում, մասնավորապես Երևան քաղաքում, քան

գյուղական բնակավայրերում, որտեղ տնային տնտեսությունները շատ հաճախ այրում կամ հորում են իրենց աղբը: Բնակչության մի մասը՝ ծայրահեղ աղքատների 31.8%-ը, աղքատների 28.4%-ը և ոչ աղքատների 20.4%-ը բողոքել են, որ աղբահանությունը վատ է իրականացվում (Աղյուսակ 10.4):

Աղյուսակ 10.9. Հայաստան. Աղբահանությունը, 2008 և 2014թթ.

(տոկոսներով)

	Քաղաքային բնակավայրեր		Երևան		Այլ քաղաքներ		Գյուղական բնակավայրեր		Ընդամենը	
	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.
Աղբամուղ և/կամ հավաքվում է բեռնատարով. թափվում է աղբակույտի մեջ	98.0	99.3	99.5	100	96.5	98.6	47.4	63.3	80.9	87.2
Այրվում է	0.8	0.5	0.1	0.0	1.5	1.1	31.9	26.7	11.3	9.4
Հորվում է	0.4	0.0	0.1	0.0	0.6	0.0	10.4	7.8	3.8	2.6
Այլ	0.8	0.2	0.3	0.0	1.4	0.3	10.3	2.2	4.0	0.8

Աղբուրդ. SSԿԱՀ 2008 և 2014թթ.

10.3. Բնակարանների ջեռուցումը

Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների գերակշիռ մասը ջեռուցել են իրենց բնակարանները: Իր կացարանը ջեռուցող տնային տնտեսությունների համամասնությունը 2014թ.-ին կազմել է 98.4% (Աղյուսակ 10.10):

Կացարանների ջեռուցման համար տնային տնտեսություններն օգտագործել են բնական գազը՝ 43.8% (2010թ.-ի՝ 57.1%-ի դիմաց), փայտը՝ 33.2% (2010թ.-ի՝ 25.8%-ի դիմաց), էլեկտրականությունը՝ 16.8% (2010թ.-ի՝ 11.7%-ի դիմաց) և այլն:

Նախորդ տարվա համեմատ ավելացել է բնակարաններն էլեկտրականությամբ և փայտով ջեռուցող տնային տնտեսությունների մասնաբաժինը, համապատասխան՝ 14.7%-ից 16.8% և 30.1%-ից 33.2%: Ավելացել է նաև էներգիայի այլ տեսակներով ջեռուցող տնային տնտեսությունների մասնաբաժինը, համապատասխանաբար՝ 3.8%-ից 6%: 2014թ. տնային տնտեսությունների 99.7%-ն ունի էլեկտրականություն, 81.8%-ը՝ կենտրոնացված զազամատակարարում:

Աղյուսակ 10.10. Հայաստան. Կացարանների ջեռուցման տեսակները, 2010 և 2014թթ.

(տոկոսներով)

	Քաղաքային բնակավայրեր		ք.Երևան		Այլ քաղաքներ		Գյուղական բնակավայրեր		Ընդամենը	
	2010թ.	2014թ.	2010թ.	2014թ.	2010թ.	2014թ.	2010թ.	2014թ.	2010թ.	2014թ.
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100
Չեն ջեռուցվել	1.7	2.2	2.4	2.6	1.1	1.7	0.5	0.5	1.3	1.6
Ջեռուցվել են այդ թվում բնակատեղիներում օգտագործված էներգիայի տեսակների	98.3	97.8	97.6	97.4	98.9	98.3	99.5	99.5	98.7	98.4
Կենտրոնացված ջեռուցում	0.4	0.0	0.1	0.0	0.7	0.1	-	0.0	0.3	0.0
Նավթ. դիզել. վառելիք	-	0.0	-	0.0	-	0.0	0.1	0.0	0.0	0.0
Էլեկտրաէներգիա	17.2	24.8	23.2	29.5	11.0	20.0	1.0	1.2	11.7	16.8
Գազ	69.4	58.5	70.1	64.4	68.7	52.3	33.2	16.1	57.1	44.0
Փայտ	12.0	14.9	6.0	5.1	18.2	25.0	52.5	68.5	25.8	33.2
Այլ	1.0	1.8	0.6	1.0	1.4	2.6	13.2	14.2	5.1	6.0

Աղբուրդ. SSԿԱՀ 2010 և 2014թթ.

2014թ.-ին տնային տնտեսությունների մեծամասնության համար ջեռուցման հիմնական աղբյուր է հանդիսացել գազը՝ 44 տոկոս: Ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ այլ քաղաքային բնակավայրերում գազը մնում է ջեռուցման հիմնական աղբյուրը (Աղյուսակ 10.10): Իսկ գյուղական բնակավայրերում ջեռուցման հիմնական աղբյուրը մնացել է փայտը:

2014թ.-ին կացարանների ջեռուցման համար օգտագործված սարքերի տեսակներից (Աղյուսակ 10.11) բնակչությունը առավել հաճախ օգտագործել է ինչպես ինքնաշեն վառարան (39%), այնպես էլ գործարանային արտադրության վառարան (25.7%): Քաղաքային բնակավայրերում բնակչությունը նախընտրել է գործարանային արտադրության վառարանը (32%), այն դեպքում, երբ գյուղական բնակչությունը նախընտրել է ինքնաշեն վառարանը (81.9%):

Աղյուսակ 10.11. Հայաստան. Կացարանների ջեռուցման համար օգտագործված սարքերի տեսակները, 2014թ.

(տոկոսներով)

	Քաղաքային բնակավայրեր	ք.Երևան	Այլ քաղաքներ	Գյուղական բնակավայրեր	Ընդամենը
Էլեկտրական սալիկ	10.3	13.6	6.8	0.3	6.9
Էլեկտրական ջեռուցիչ	14.3	15.4	13.2	0.7	9.7
Գազօջախ	1.8	2.7	0.9	0.1	1.2
Ինքնաշեն վառարան	16.8	6.3	27.7	81.9	39.0
Գործարանային արտադրության վառարան	32.0	28.6	35.6	13.5	25.6
Լոկալ-անհատական կաթսա	24.4	32.8	15.6	2.9	17.1
Լոկալ-կոլեկտիվ կաթսա, ամբողջ շենքի համար	0.1	0.1	0.1	0.1	0.1
Կենտրոնացված ջեռուցում	-	-	-	-	-
Այլ	0.3	0.5	0.1	0.5	0.4
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուրը. *SSYUZ 2014թ.*

Ընդհանուր առմամբ, տնային տնտեսությունների միջին ամսական սպառողական ծախսերում բնակ-կոմունալ ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են 13.5 %, իսկ 2014թ.-ին բնական գազի և էլեկտրականության համար կատարված ծախսերի մասնաբաժինը նույնն է եղել և. կազմել է բնակ-կոմունալ ծախսերի 44.5%-ը: Էլեկտրաէներգիայի մասնաբաժինը նախորդ տարիների համար տես Հավելված 3, Աղյուսակ A6.1: Տնային տնտեսությունների միջին ամսական սպառողական ծախսերում կապի ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են 5.7 %:


Գծապատկեր 10.1-ը համեմատում է ոչ աղքատների, աղքատների և ծայրահեղ աղքատների միջին ամսական սպառողական ծախսերում տարբեր ծառայությունների համար կատարված ծախսերի մասնաբաժինները:

2014թ.-ին ոչ աղքատների կողմից կոմունալ ծառայությունների համար կատարված ծախսերը (մեկ շնչի հաշվով, միջին ամսական) 4.4 անգամ բարձր են, քան ծայրահեղ աղքատներինը, իսկ բնական գազի համար կատարված ծախսերը բարձր են 6.0 անգամ: Նույն ժամանակահատվածում ոչ աղքատների կողմից կապի ծառայությունների համար կատարված ծախսերը (մեկ շնչի հաշվով միջին ամսական) 8.4 անգամ բարձր են, քան ծայրահեղ աղքատներինը:

Ոչ աղքատ տնային տնտեսություններում մեկ շնչի հաշվով ամսական ծախսը միայն գազի վրա միջինում կազմել է 3 015 դրամ, աղքատներինը՝ 1 203 դրամ, ծայրահեղ աղքատներինը՝ 500 դրամ:

Գծապատկեր 10.1. Հայաստան. Տարբեր ծառայությունների դիմաց կատարված ծախսերի մասնաբաժինն ընդամենը սպառողական ծախսերի նկատմամբ ըստ աղքատության մակարդակի, 2014թ.

(տոկոսներով)



Աղբյուրը. *SSՀԱՀ 2014թ.*

**) Գազի ծառայությունները ներառում են հեռախոսավճարները, հեռագրավարձը և ինտերնետային ծառայություններից օգտվելու վճարները*

10.4. Երկարաժամկետ օգտագործման ապրանքների առկայությունը

Հայաստանի տնային տնտեսությունները նշել են, որ երկարաժամկետ օգտագործման կենցաղային ապրանքների մեծ մասը հիմնականում ձեռք է բերվել տարիներ առաջ: Գրեթե բոլոր տնային տնտեսությունները, անկախ բնակության վայրից, ունեն հեռուստացույց, իսկ սառնարան, բջջային հեռախոս, գազօջախ և լվացքի մեքենա ունեն նրանց հիմնական մասը:

2014թ.-ի ընթացքում ձեռք բերված երկարաժամկետ օգտագործման ապրանքների շարքում առավել հաճախ գնվել են սառնարաններ, լվացքի մեքենաներ, համակարգիչներ, բջջային հեռախոսներ և հեռուստացույցներ:

Աղյուսակ 10.12. Հայաստան. Երկարաժամկետ օգտագործման կենցաղային ապրանքների առկայությունը 100 տնային տնտեսությունների հաշվով, 2008 և 2014թթ.

(տոկոսներով)

	Ընդամենը		Քաղաք		Գյուղ	
	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.	2008թ.	2014թ.
Հեռուստացույց	98	98.3	99	99.1	98	96.8
Սառնարան	91	95.4	94	95.6	85	94.9
Լվացքի մեքենա	79	90.6	82	90.5	73	90.6
Փռչեկուլ	46	70.6	52	74.4	33	63.1
Կարի մեքենա	42	50.5	41	49.2	45	53.0
Գազօջախ	86	91.0	89	91.3	80	90.4
Արբանյակային ալեհավաք	7	26.0	6	19.3	9	39.1
Բջջային հեռախոս	72	95.1	75	95.1	68	95.4
Տեսամագնիստոֆոն	35	33.8	37	34.7	31	31.9
Տեսախցիկ	3	7.3	3	8.4	1	5.1
Լուսանկարչական ապարատ	22	34.4	21	34.0	23	35.3
Երաժշտական կենտրոն	23	33.4	26	29.6	19	40.8
Համակարգիչ	10	57.0	14	62.8	2	45.5

Աղբյուրը. *SSYUL* 2008 և 2014թթ.

2014թ. տնային տնտեսությունների 99.7 տոկոսը տանն ունի էլեկտրականություն (քաղաքներում 99.6%, գյուղերում 99.9%), բջջային հեռախոս՝ 95.2 տոկոս (քաղաքներում 95.1%, գյուղերում 95.4%), ռադիոընդունիչ՝ 25.9 տոկոսը (քաղաքներում 27.7%, գյուղերում 22.3%), ստացիոնար հեռախոս՝ 62.3 տոկոսը (քաղաքներում 77.6%, գյուղերում 32.4 %):

Վերջին տարիների ընթացքում կտրուկ ավելացել է բջջային հեռախոս ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը, հատկապես գյուղական վայրերում, որտեղ նրանց թիվը 2014թ.-ին հասել է 95.4%-ի:

Համաձայն կապի ծառայություններ մատուցող կազմակերպությունների վիճակագրական տվյալների, 2014թ.-ին բջջային կապի ակտիվ բաժանորդների քանակը կազմել է 3 459.1 հազար, ինչը 3.4%-ով բարձր է 2013թ.-ի համապատասխան ցուցանիշից: Իսկ ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակը 2014թ.-ին կազմել է 2 084.2 հազար, որից բջջային հեռախոսակապով՝ 1 561.8 հազար կամ 74.9%:

2014թ.-ին համակարգիչ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը ըստ հետազոտության տվյալների կազմել է 57% :

Աղյուսակ 10.13. Հայաստան. Համակարգչի և ինտերնետային կապի մատչելիությունը վերջին 3 ամիսների ընթացքում տնային տնտեսության որևէ անդամին, 2008 և 2014թթ.

(տոկոսներով)

	2008թ.			2014թ.		
	Ընդամենը	քաղաք	գյուղ	Ընդամենը	քաղաք	գյուղ
Ընդամենը տնային տնտեսություններ	100	100	100	100	100	100
այդ թվում՝						
Տնային տնտեսության որևէ անդամին մատչելի (առկա) է համակարգիչը*	17.9	21.8	10.3	58.4	63.7	48.1
Տանը	10.2	14.3	2.1	57.0	62.4	46.2
Այլ տեղում	10.5	11.2	9.2	8.1	7.7	8.8
Տնային տնտեսության անդամները օգտվում են ինտերնետից	54.6	61.0	43.6
Տանը մշտական և ոչ միշտ	5.9	8.6	0.5	53.1	59.8	41.6
Որև է այլ տեղում*	5.8	15.8	17.2	13.3
այդ թվում՝						
Աշխատավայրում	2.6	3.1	1.7
Ուսումնական հաստատությունում	1.4	1.4	1.5
Այլ անձանց տանը	1.9	1.9	1.9
Ինտերնետի մատչելիության (անվճար) կենտրոնում	0.2	0.2	0.2
Ինտերնետի մատչելիության (վճարովի) կենտրոնում	0.1	0.1	0.2
Բջջային հեռախոսի միջոցով ցանկացած վայրում	12.4	13.5	10.4
Այլ վայրում շարժական սարքի միջոցով	0.7	0.4	1.2

Աղբյուրը. *SSYUZ 2008 և 2014թթ.*

**Գումարը գերազանցում է ընդամենը, քանի որ մեկ անդամը կարող է օգտվել համակարգից և տանը և այլ տեղում:*

2014թ.-ին տնային տնտեսության անդամներից 54.6%-ին մատչելի է եղել ինտերնետային կապը (Աղյուսակ 10.13), այդ թվում՝ քաղաքային բնակավայրերում՝ 61.0%-ին, իսկ գյուղական բնակավայրերում՝ 43.6%-ին: Ինտերնետային կապը մատչելի էր ինչպես տանից, այնպես էլ այլ վայրերից: Այսպիսով, տնային տնտեսությունների անդամների 53.1%-ը տանն ունեցել է մշտական կամ ոչ մշտական ինտերնետային կապ: Իսկ տնային տնտեսությունների 15.8%-ն օգտվել է ինտերնետային կապից այլ վայրերում, այդ թվում աշխատավայրում՝ 2.6%, ուսումնական հաստատությունում՝ 1.4%, ինտերնետի մատչելիության անվճար կենտրոնում՝ 0.2%, ինտերնետի մատչելիության վճարովի կենտրոնում՝ 0.1 %, ցանկացած վայրում բջջային հեռախոսի միջոցով՝ 12.4 % , այլ վայրում շարժական սարքի միջոցով՝ 0.7%: Տնային տնտեսությունների անդամների կողմից ինտերնետային կապի մատչելիության մասին հիմնական արդյունքները, ըստ տնային տնտեսությունների անդամների սեռի և տարիքի, բերվում են ստորև.

Աղյուսակ 10.14. Հայաստան. Ինտերնետային կապի մատչելիությունը տնային տնտեսության անդամներին վերջին 12 ամիսների ընթացքում ըստ անդամների սեռի և տարիքի, 2014թ. (տոկոսներով)

	Ընդամենը բնակչու- թյուն	Սեռ		Տարիք			
		տղամարդ	կին	<5	5-14	15-24	25+
Տնային տնտեսության անդամները օգտվում են ինտերնետից	54.6	56.6	53.0	17.6	52.8	69.7	56.0
<i>Տանը մշտական կամ ոչ միշտ</i>	53.1	55.1	51.5	17.5	51.1	66.6	54.7
<i>Որն է այլ տեղում</i>	15.8	18.3	13.6	0.3	8.3	16.4	18.7
այդ թվում							
Աշխատավայրում	2.6	2.9	2.4	-	0.3	2.0	3.4
Ուսումնական հաստատությունում	1.4	1.5	1.3	-	4.5	5.9	0.1
Այլ անձանց տանը	1.9	2.0	1.8	0.3	3.0	3.8	1.5
Ինտերնետի մատչելիության (անվճար) կենտրոնում	0.2	0.2	0.2	-	0.4	0.7	0.1
Ինտերնետի մատչելիության (վճարովի) կենտրոնում	0.1	0.2	0.1	-	0.1	0.7	0.0
Բջջային հեռախոսի միջոցով ցանկացած վայրում	12.4	14.9	10.3	-	3.7	9.7	15.9
Այլ վայրում շարժական սարքի միջոցով	0.7	0.9	0.6	-	1.2	2.1	0.4

Աղբյուրը. *SSYUՀ 2014թ.*

2014թ.-ին տնային տնտեսության անդամներից 54.6%-ին մատչելի է եղել ինտերնետային կապը, այդ թվում՝ տղամարդկանց 56.6%-ին, իսկ կանանց՝ 53.0 %-ին (Աղյուսակ 10.14): Ինտերնետային կապն ավելի շատ մատչելի է եղել 15-24 տարեկաններին (69.7%):